Ուսուցչի ձեռնարկ

9

Հնազանդություն Մարդուն

Ենթարկվող վերաբերմունք մշակել իշխանություն ունեցողների հանդեպ

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հնազանդություն Մարդուն

Ենթարկվող վերաբերմունք մշակել իշխանություն ունեցողների հանդեպ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հնազանդություն Մարդուն
Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Obedience to Man,
5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈւՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 05-2018

Հնազանդություն Մարդուն

Այս դասը, հնարավոր է, շատ հակասական լինի, հատկապես, եթե քո ուսանողներից ոմանք ճշմարիտ քրիստոնյաներ չեն: Հնազանդության վերաբերյալ Աստծո մոտեցումը ոչ-քրիստոնյաների մեծ մասի համար շատ իմաստ չի արտահայտում: Այս դասընթացի տեսակետից կարևոր է հստակեցնել, թե ինչ է Աստված ակնկալում ճշմարիտ քրիստոնյաներից: Աստված ճշմարիտ քրիստոնյաներին կտա զորություն հնազանդվելու իրենց առաջնորդներին:

1

Գլուխ 1. Հիմնական ճշմարտություններ քո առաջնորդներին հնազանդվելու համար:

Այս գլուխը սկսվում է քո առաջնորդների հետ ունեցած քո կյանքի փորձառության քննարկումով: Մենք նաև կտեսնենք, թե ովքեր են այն մարդիկ, ում մենք պետք է հնազանդվենք: Մենք նաև կուսումնասիրենք մի քանի ուղեցույցներ, որոնք մեզ կօգնեն սիրով հնազանդվել մեր առաջնորդներին:

2

Գլուխ 2. Հնազանդության երեք մակարդակներ:

Մենք կուսումնասիրենք հնազանդության երեք մակարդակները, որոնք մեզ կօգնեն առաջ գնալ ունենալու համար ավելի արդյունավետ կենսակերպ, որը պատիվ կբերի Աստծուն:

3

Գլուխ 3. Ինչպե՞ս պետք է արձագանքես քո առաջնորդի հետ խոսելիս:

Մենք կուսումնասիրենք, թե որոնք են մեր առաջնորդներին պատասխանելու պատշաճ ձևերը նրանց հետ խոսելիս: Մենք կքննենք մի քանի գործնական ձևեր՝ հնազանդության կայուն կենսակերպ զարգացնելու համար:

4

Գլուխ 4. Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:

Այս գլխում անդրադառնում ենք մի դժվար թեմայի, երբ ավելի ճիշտ է քո առաջնորդին չհնազանդվելը: Մենք նաև քննում ենք այն իրավիճակները, երբ պատշաճ արձագանքը հնարամիտ ձևով այլընտրանքային տարբերակ գտնելն է այն հանձնարարության համար, որը մեր առաջնորդն է մեզ տվել:

5

Գլուխ 5. Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները:

Ժամանակ հատկացնելը և քննելը, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ քո առաջնորդներին հնազանդվելն ու չհնազանդվելը, կարող է հզոր խթան հանդիսանալ քեզ համար փոխելու քո առաջնորդներին արձագանքելու քո ձևը: Մենք նաև կուսումնասիրենք բնական հետևանքների, դաստիարակության, պատժի և վրեժխնդրության միջև եղած տարբերությունները, քանի որ դրանք կապ ունեն անհնազանդության հետ:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի Ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի Ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ

եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասաժամից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,

ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:

Դասի ծրագրեր

ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասի ընդհանուր նկարագրություն

1. Այս դասընթացը քո ուսանողների համար կարող է լինել շատ հակասական, սակայն շատ օգտակար մի թեմա: Ներառված են դասի չորս ծրագրեր, իսկ հինգերորդը ստուգարքի համար է: Բայց և այնպես, դու կարող ես ավելի շատ ժամանակ տրամադրել այս թեմային, եթե քո ժամանակացույցը քեզ թույլ տալիս է: Դասի ծրագրերում դու կգտնես առաջարկություն, թե ինչպես դասերը բաժանել մեկից ավելի դասաժամերի:
2. Եթե դու այս դասընթացը բաժանես չորսից ավելի դասաժամերի, համոզվի՛ր, որ յուրաքանչյուր դասաժամի համար ունես անձնական կիրառության բաժին:
3. Եթե դու սա ուսուցանում ես Թին Չելենջի կենտրոնում, կամ նմանատիպ այլ ծրագրի շրջանակներում, ապա կարող ես անձնակազմի մյուս անդամներին տեղյակ պահել, որ ուսուցանում ես այս դասընթացը: Քաջալերի՛ր նրանց, որ ուսանողներին ավելի շատ ազատություն տան՝ հարցնելու իրենց, թե ինչու իրենք ունեն այս կամ այն կանոնը:
4. Եթե քո ուսանողներից ոմանք ճշմարիտ քրիստոնյաներ չեն, նրանց համար այս դասընթացի որոշ ուսուցումներ կարող են բացարձակ անընդունելի լինել: Երբ դու նման ընդդիմության հանդիպես, քեզ պարտադրված մի՛ զգա՝ նրանց համոզելու համար, որ հավատան այն բանին, ինչ դու սովորեցնում ես: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի ուշադիր լսեն, թե ինչ է Աստված ասում այս թեմայի վերաբերյալ: Ժամանա՛կ տուր Սուրբ Հոգուն՝ գործելու քո ուսանողների կյանքում:
5. Այն ուսանողները, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ են, կարիք ունեն հստակ հասկանալու, որ իրենց առաջնորդներին հնազանդվելը ընտրություն չէ: Աստված պատվիրել է նրանց՝ հնազանդվել իրենց առաջնորդներին: Նրանց վրա պարտականություն կա՝ վարվելու ըստ Աստծո չափանիշի:
6. Պատասխաններ կան Ուսուցման ուղեցույցի 1-ին, 3-րդ և 5-րդ նախագծերի համար: Խնդրում եմ, հաշվի՛ առ, որ որոշ դեպքերում ուսանողներին առիթ է տրվում պատասխանները գրել իրենց բառերով, այնպես որ նրանք կարող են ունենալ տարբեր պատասխաններ, որոնք նույնպես ճիշտ կլինեն: Դու նման դեպքերում կարիք կունենաս օգտագործել քո սեփական դատողությունը: Ուսուցման ուղեցույցի պատասխաններն այս Ուսուցչի ձեռնարկում են՝ Ուսուցման ուղեցույցից անմիջապես հետո:
7. Ուսուցման ուղեցույցի 7-րդ նախագիծը պահանջում է գրել առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքներ: Նախագիծն ասում է. «Գրի՛ր առնվազն _________ արդյունքներ»: Դու պետք է քո ուսանողներին ասես, թե քանի արդյունք ես ուզում, որ նրանք գրեն:
8. Այս դասընթացի թեմաներին անդրադառնալիս լավ կլինի, եթե քննարկումների համար սահմաններ դնես: Դու պետք է գործ ունենաս միայն իրական իրավիճակների հետ, այլ ոչ թե մտացածին: Այս դասընթացում շատ կլինեն «Իսկ եթե…» հարցեր, որոնք քո ուսանողները կարող են բարձրացնել: Սա կարող է քեզ տանել անիմաստ քննարկումների ուղիով: Ձեր քննարկումները սահմանափակի՛ր իրական դեպքերի շրջանակներում և կտեսնես, որ քեզ համար շատ ավելի հեշտ կլինի չկորցնել յուրաքանչյուր դասի նպատակակետը:

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը Հնազանդություն Մարդուն

Հարցաշար Անգիր համարներ Ամսաթիվ

	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	Հռոմեացիներին 13:1-2	օր 2.
2	Եփեսացիներին 6:1,3	օր 3.
3		

Նախագծեր Ամիս, ամսաթիվ

	Ամիս, ամսաթիվ	
1	օր 1.	Նայել առաջնորդներին
2	օր 2. կամ 3.	Որոշում՝ հնազանդվելու իմ առաջնորդներին
3	օր 2.	Դանիելը և նրա ուտելիքը
4	օր 2.	Իմ առաջնորդներին հնազանդվելու իմ փորձառությունը
5	օր 3. կամ 4.	Դանիելի երեք ընկերները և հնոցը
6	օր 4.	Համեմատել Դանիել 1-ինը և Դանիել 3-րդը
7	օր 4.	Հնազանդության և անհնազանդության արդյունքները
8	օր 4.	Հնազանդվի՛ր քո կամքով

Ստուգարք Ամսաթիվ օր 5.

1

Դաս 1.
Հիմնական ճշմարտություններ քո առաջնորդներին հնազանդվելու համար

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է զարգացնեմ գործնական ձևեր՝ իմ առաջնորդներին ցույց տալու համար, որ ուզում եմ հնազանդվել նրանց:

2. Բանալի համար. Բ Կորնթացիներին 9:7.

«Ամեն մեկը, ինչպես սրտով հոժար է, թող այնպես տա, ոչ թե խնայողաբար կամ հարկադրաբար, քանի որ Աստված սիրում է ուրախությամբ տվողին»:

(Տե՛ս հատուկ նշումը, թե ինչո՛ւ է այս համարն օգտագործվում այս դասի ծրագրի գործողության համար այս Ուսուցչի ձեռնարկի 19-րդ էջի 12-րդ կետում):

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համընթաց է այս դասին: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ինի՝ *«Նայել առաջնորդներին»* բաժինը նույնպես կօգտագործվի այս դասի հետ:

4. Որոշի՛ր. մե՞կ, թե՞ երկու դասաժամում ես սա ուսուցանելու:

Այս դասի ծրագրում անցկացվելիք նյութերը դիտարկելուց հետո դու կարող ես որոշել, որ երկու դասաժամի կարիք ունես այս թեմաներն անցնելու համար: Սա հեշտությամբ կարելի է անել:

Դասի ծրագրի 10-րդ (էջի 12-րդ) գործողությունից սկսած քննարկվում է հնազանդ վերաբերմունքներ զարգացնելու թեման: Այդ նյութի մեծ մասը կարելի է անցկացնել մեկ այլ դասաժամում՝ թողնելով լրացուցիչ ժամանակ, որպեսզի քննարկվեն այս դասի ծրագրի և Ուսուցման ուղեցույցի 1-ին Նախագծի շրջանակներում բարձրացված հարցերը:

1

5. Դասի ջերմացում (3-5 րոպե):

Դասը սկսի՛ր հետևյալ՝ **համաձայն եմ-համաձայն չեմ** գործողությամբ: Դու կարող ես բազմացնել և բաժանել այս գործողության օրինակները, որպեսզի յուրաքանչյուր ուսանող ունենա մեկական օրինակ: Հարցրո՛ւ ուսանողներին, թե արդյո՞ք համաձայն են, կամ համաձայն չեն յուրաքանչյուր պնդումի հետ: Սա նրանց համար առիթ է՝ արտահայտելու իրենց կարծիքը: Ստորև բերվում է նշված գործողության շարքը.

1. Բոլոր կառավարություններն Աստծո վերահսկողության տակ են:
2. Իշխանություններն Աստծո ծառաներն են՝ ուղարկված քո օգուտի համար:
3. Կառավարության աշխատողները պետք է վճարվեն: Նրանք Աստծուն են ծառայում՝ իրենց գործն անելով:
4. Վճարի՛ր հարկերը, որպեսզի կյանքի բնականոն ընթացքը պահպանվի:
5. Եթե անպատասխանատու ես երկրի հանդեպ, դու անպատասխանատու ես Աստծո հանդեպ:
6. Իշխանությունները վախ չեն տարածում նրանց վրա, ովքեր ճիշտ բաներ են անում, այլ նրանց վրա, ովքեր վատ բաներ են անում:

Երբ ուսանողները վերջացնեն իրենց կարծիքները նշել, քվեարկության միջոցով յուրաքանչյուր պնդման համար հարցրո՛ւմ արա, թե քանիսն են համաձայն, իսկ քանիսը՝ ոչ: Եթե նրանցից ոմանք ցանկանան բացատրել, թե ինչու են այս կամ այն պատասխանը տվել, դու կարող ես նրանց ժամանակ տալ:

Երբ հարցումն ու հետագա քննարկումն ավարտես, բացատրի՛ր նրանց, որ Աստված նույնպես կարծիք ունի այս պնդումներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Հռոմեացիներին 13-րդ գլուխը մեզ ասում է, թե ինչ է Նա մտածում այս մասին: համաձայն է բոլոր պնդումների հետ: Այդ պնդումներից շատերը Հռոմեացիներին 13:1-7 հատվածից են: Դու կարող ես ուսանողներից մեկին խնդրել՝ կարդալ հետևյալ համարները.

1. Հռոմեացիներին 13:1

2. Հռոմեացիներին 13:4

3. Հռոմեացիներին 13:6

1

4. Հռոմեացիներին 13:7

5. Հռոմեացիներին 13:2

6. Հռոմեացիներին 13:3

Հետագա օրերին մենք ավելի մանրամասն կդիտարկենք, թե որն է Աստծո կարծիքը մեր առաջնորդներին հնազանդվելու վերաբերյալ: Քո ուսանողներից ոմանք, հնարավոր է, չհամաձայնվեն այն ամենի հետ, ինչ լսում կամ կարդում են Աստվածաշնչում: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի ամեն մեկն ազատ միտք ունենա, երբ մենք քննարկում ենք՝ թե ինչ է Աստված ասում մեր առաջնորդներին հնազանդվելու վերաբերյալ:

6. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Կյանքի ի՞նչ փորձառություն ես դու ունեցել քո առաջնորդների հետ» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 4-6-րդ էջեր:

Ուսանողի ձեռնարկն այստեղ ունի չորս ենթակետ.

1. Հնազանդության թեման:

2. Կոնֆլիկտ առաջնորդների հետ:

3. Անհնազանդության սովորությունը:

4. Ինչքանո՞վ է Աստված համապատասխանում քո կյանքին:

Սրանցից յուրաքանչյուրը կարող էր երկար քննարկման առարկա լինել: Այնպես որ, դու պետք է զգուշությամբ հետևես, թե ինչքան ժամանակ կարող ես տրամադրել դրանցից յուրաքանչյուրին: Սրանք պետք է համեմատաբար արագ քննարկել՝ քո ուսանողներին ժամանակ տալով, որպեսզի կիսվեն իրենց պատմություններով: Արդյունքում դու ավելի լավ կհասկանաս, թե ինչ փորձառություն ունեն նրանք իրենց անցյալ և ներկա առաջնորդների հետ:

Ենթակետ 4-րդը՝ «Ինչքանո՞վ է Աստված համապատասխանում քո կյանքին», իրականում որոշիչ է: Եթե քո ուսանողներից ոմանք դեռևս իրենց կյանքը չեն հանձնել Քրիստոսին, ապա այս դասընթացի շատ ուսուցումներ նրանց համար ոչ մի իմաստ չեն ունենա: Որպես նրանց ուսուցիչ՝ դու պետք է նրանց քաջալերես, որպեսզի Աստվածաշնչի ուսուցումներին նայեն այս տեսանկյունից: Մտնանշի՛ր, որ դու ընդամենն ուզում ես, որ նրանք ազատ միտք ունենան Աստծո ուսուցումների համար:

1

7. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ո՞ր առաջնորդներին դու պետք է հնազանդվես» (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 6-8-րդ էջեր, և Ուսուցման ձեռնարկ, Նախագիծ 1., 5-րդ և 6-րդ հարցեր:

Արագ քննարկի՛ր, թե որ առաջնորդներին նրանք պետք է հնազանդվեն: Ուսանողի ձեռնարկը նշում է առաջնորդների մի քանի խմբեր, որոնց նրանք պետք է հնազանդվեն: Ավելացրո՛ւ այլ առաջնորդների էլ, որոնց մասին այդ ցուցակում նշված չէ:

Ուսանողի ձեռնարկի 8-րդ էջում՝ 5-րդ ենթակետից («Քո ներկայիս բնակավայրի ղեկավարները») հետո, դու կգտնես մի հատված, որը խոսում է քո առաջնորդներին վստահելու և հնազանդվելու միջև եղած կապի մասին: Ժամանա՛կ հատկացրու, որպեսզի քննարկես այս ամբողջ թեման:

> Քո առաջնորդներին հնազանդվել սովորելու գաղտնիքներից մեկն Աստծուն վստահելն է, որ Նա կարող է ցանկացած առաջնորդի օգտագործել քո կյանքում: Դու կարող ես վստահել Աստծուն և համոզված լինել, որ Նա կօգտագործի քո առաջնորդներին՝ անելու այն բոլոր լավ բաները, որոնք Նա ծրագրել է քո կյանքի համար: Աստծուն վստահելն այստեղ առանցքային է: Աստված կարող է գործել քո բոլոր առաջնորդների միջոցով, անգամ նրանց, ովքեր կատարյալ չեն:
>
> *Ուսանողի ձեռնարկ, 8-րդ էջ*

Այս պահին դու կարող ես քննարկել նաև նրանց պատասխանները, որ տվել են Ուսուցման ուղեցույցի **Նախագիծ 1-ինում**: Ուսանողներից պահանջվում էր իրենց պատասխանները վերցնել Հռոմեացիներին 13:1-7 և Ա Պետրոս 2:13-17 հատվածներից:

Հարց 5. Որտեղի՞ց են ղեկավարները ստանում իրենց իշխանությունը: (Որտեղի՞ց են ղեկավարները ստանում իրավունք՝ առաջնորդելու կամ ղեկավարելու):

Հարց 6. Ի՞նչ է մարդն իրականում անում, երբ չի հնազանդվում իր առաջնորդին:

Հռոմեացիներին 13:1-7-ը և Ա Պետրոս 2:13-17-ն օգտագործվել են Նախագիծ 1-ինում՝ առաջին հերթին կառավարող իշխանավորներին հղում անելու համար: Սակայն նույն սկզբունքները ճիշտ են նաև այլ ղեկավարների համար, որոնց Աստված կարգել է մեզ վրա:

1

Մատնանշի՛ր, որ մենք պետք է ենթարկվենք սահմանափակ թվով իշխանավորների: Եթե ապրում ես Միացյալ Նահանգներում, դու պարտավոր ես ենթարկվել այդ երկրի իշխանավորներին: Դու պարտավոր չես ենթարկվել այլ երկրի իշխանավորներին, եթե, իհա՛րկե, չես գնում այդ երկիր այցելելու կամ ապրելու: Մեզնից պահանջվում է հնազանդվել միայն այն առաջնորդներին, ովքեր մեզ վրա անմիջական իշխանություն ունեն:

Օրինակ, որոշ երկրներում օրենքը պահանջում է մեքենա վարել ճանապարհի ձախ մասով: Դու պարտավոր ես ենթարկվել միայն այն երկրի ճանապարհային օրենքներին, որտեղ դու այդ պահին մեքենա ես վարում: Եթե գնաս մեկ այլ երկիր, դու պետք է ենթարկվես այդ երկրի օրենքներին, քանի դեռ այնտեղ ես: Դու չես կարող ասել. «Դե՛հ, քանի որ իմ երկրում այսպիսի օրենք չկա, ես պարտավոր չեմ ենթարկվել»:

8. **Քննարկի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 1-ին և 2-րդ հարցերը (3-5 րոպե):**

Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույցի **Նախագիծ 1-ինի 1-ին հարցին:**

Հարց 1.
Ո՞րն է իշխանությունների գոյության նպատակը
(ինչո՞ւ մենք ղեկավարներ ունենք):

Իշխանությունների գոյության նպատակը քննարկելիս սկզբում թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով: Դրանից հետո ավելացրո՛ւ ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որի վերաբերյալ քո կարծիքով կարիք կա հարցը լիարժեք հասկանալու համար:

Նախագիծ 1-ինի 2-րդ հարցը քննարկելիս խնդրի՛ր, որ մի քանի հոգի կամավոր կերպով կիսվեն իրենց պատասխաններով:

Հարց 2.

ա. **Քո կյանքում ո՞վ է եղել այն ղեկավարը, որին հնազանդվելը քեզ համար ամենադժվարն էր:**

բ. **Ինչո՞ւ է քեզ համար այդքան դժվար եղել հնազանդվել այդ մարդուն:**

Եթե ուսանողները հապաղեն կիսվել իրենց պատասխաններով, ասա՛ նրանց, թե ով է եղել այն անձնավորությունը, ում դու քո կյանքում ամենաշատն ես դժվարացել ենթարկվել: Դու նաև կարող ես կիսվել մի քանի

1

օրինակներով, թե ինչ պատասխաններ են տվել նախկին ուսանողներն այս հարցին:

9. Նախագիծ 1-ինի 3-րդ հարցը իշխանությունների հետ վերջերս ունեցած խնդիրների վերաբերյալ:

Կարծում եմ՝ լավագույն տարբերակը կլինի՝ խմբային քննարկման մեջ չմտնել նրանց պատասխանները քննարկելիս, որոնք նրանք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի **3-րդ** հարցին. **«Անցած մեկ կամ երկու ամսվա ընթացքում, ո՞վ է եղել այն ղեկավարը, ում դու ամենաշատն ես դժվարացել հնազանդվել»:**

Բայց և այնպես, հնարավոր է՝ քեզ համար օգտակար լինի նրանց հետ առանձին քննարկել այս հարցին տված նրանց պատասխանները: Սա, հավանաբար, ավելի լավ կլինի անել այս դասաժամից դուրս:

10. Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Զարգացրո՛ւ հնազանդ վերաբերմունքներ» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-րդ էջ:

Հաջորդը քննարկի՛ր այն վերաբերմունքները, որոնք հեշտացնում են քո առաջնորդներին չհնազանդվելը: Վերաբերմունքների նմանատիպ մի ցուցակ քննարկվում է *Հնազանդություն Աստծուն* դասընթացում: Դասի այս հատվածը քննարկելիս հնարավոր է՝ ուսանողները սկսեն որոշակի տեսնել, թե ինչու էր անցյալում նրանց համար այդքան դժվար՝ հնազանդվել իրենց առաջնորդներից ոմանց:

****Հատուկ նշում ուսուցչի համար****

Անհնազանդ վերաբերմունքների մասին այս հատվածը և հնազանդ վերաբերմունքներ զարգացնելու վերաբերյալ հետագա նյութը շատ հեշտությամբ կարելի է ընդարձակել և դրանով լցնել մի ամբողջ դասաժամ: ***Հնազանդություն Աստծուն*** դասընթացի՝ Դասի ծրագիր #2-ը վերաբերում է այս նույն թեմային, քանի որ այն վերաբերում է նաև Աստծուն հնազանդվելուն: Եթե դու որոշես այս թեման անցկացնել առանձին դասաժամով, այդ դասի ծրագիրը քեզ որոշ գաղափարներ կտա, թե ինչպես կարելի է ծրագրել տվյալ դասը:

1

11. Քննարկի՛ր անհնազանդ վերաբերմունքների թեման (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-9-րդ էջ:

Նախքան հնազանդ վերաբերմունքների վերաբերյալ քննարկում սկսելը ընդամենը մի քանի րոպե հատկացրու՝ խոսելու այն վերաբերմունքների մասին, որոնք հեշտացնում են քո առաջնորդներին չհնազանդվելը:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, թե ինչ է վերաբերմունքը: ***Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար*** դասընթացում կա հատուկ բաժին՝ ***Վերաբերմունքներ***, որը շատ ավելի մանրամասն է պատմում սրա մասին: Հիմնական միտքը, որ այստեղ պետք է նշել, այն է, որ վերաբերմունքը մտածելակերպ է, որն ուղղակիորեն ազդում է քո որոշումները կայացնելու և քո առաջնորդներին արձագանքելու վրա:

Դու կարող ես քո ուսանողներին խնդրել, որ բացեն Ուսանողի ձեռնարկի 8-րդ էջը: Թող քո ուսանողներն իրենք իրենց գնահատեն, թե որքանով են անհնազանդ վերաբերմունքներն ուժեղ իրենց կյանքում: Թող նրանք իրենք իրենց գնահատեն՝ օգտագործելով 1-10 միավորների սանդղակը ամեն մի վերաբերմունքի համար, որտեղ 10 միավորը կնշանակի, որ այդ վերաբերմունքը մեծ տեղ ունի նրանց կյանքում, իսկ 1-ը՝ որ նրանք գրեթե այդ վերաբերմունքով չեն արձագանքում:

____ Դատապարտող վերաբերմունք (քննադատող վերաբերմունք)
____Ըմբոստ վերաբերմունք
____Երախտամոռ վերաբերմունք
____Ծույլ վերաբերմունք
____Նեղացկոտ վերաբերմունք
____Կամակոր վերաբերմունք

Ուսանողի ձեռնարկ, էջ 9-րդ

Նշի՛ր, թե ինչպես է մեր վերաբերմունքն ազդում մեր վարքի վրա: Եթե նրանք ունեն այս վերաբերմունքներից, դա սովորաբար հեշտ է նկատել այն ժամանակ, երբ իրենց առաջնորդների հետ կապված դժվարին իրադրության մեջ են հայտնվում: Այդպիսի իրավիճակներում անհնազանդ վերաբերմունքն ի հայտ է գալիս: Եթե նրանք թույլ տան, որ իրենց այդ վերաբերմունքները ղեկավարեն իրենց գործողությունները, այդ դեպքում անհնազանդ կլինեն իրենց առաջնորդներին:

Օգտակար է մատնանշելը, որ Աստծուն հաճելի կյանք ապրելն իր մեջ ներառում է հին, անհնազանդ վերաբերմունքները «հանելն» ու նոր, հնազանդ

վերաբերմունքները «հազնելը»: Սա մի վայրկյանում տեղի չի ունենում: Սա դժվարին աշխատանք է, որը ժամանակ է պահանջում: Սակայն Աստված պատրաստ է նրանց օգնել, եթե նրանք պատրաստ են այս փոփոխություններն իրականացնել իրենց կյանքում:

Արդյունավետ կլինի դասի այս մասը կառուցել Փիլիպպեցիներին 2:5-ի վրա:

Փիլիպպեցիներին 2:5.
«Նույն միտքը թող լինի ձեր մեջ, ինչ Հիսուս Քրիստոսի մեջ էր»:

12. Նրանք ուզո՞ւմ են հնազանդվել իրենց առաջնորդներին: (2-3 րոպե)

Այն բանից հետո, երբ դուք արդեն քննարկել եք այն վերաբերմունքները, որոնք հեշտացնում են առաջնորդներին չհնազանդվելը, նշի՛ր, որ այժմ նրանք պետք է գնահատեն իրենց վերաբերմունքը իրենց առաջնորդներին հնազանդվելու վերաբերյալ: Նրանք **<u>ուզո՞ւմ</u>** են հնազանդվել իրենց առաջնորդներին ներկա պահին:

Եթե նրանք ճշմարիտ քրիստոնյաներ են, ապա պետք է գիտակցեն, որ Աստված պատվիրում է նրանց՝ հնազանդվել իրենց առաջնորդներին: Նրանք իրո՞ք ուզում են հնազանդվել իրենց առաջնորդներին: Եթե ոչ՝ ինչո՞ւ: Եթե նրանք դեռ որոշում չեն ընդունել՝ հնազանդվելու իրենց առաջնորդներին, հիմա ճիշտ ժամանակն է:

Ներկայացրո՛ւ բանալի համարը և ցո՛ւյց տուր, թե ինչ կապ ունի այն իրենց առաջնորդներին հնազանդվելու որոշում կայացնելու հետ: Այս համարը խոսում է տալու մասին: Այն բացատրում է, թե ինչպիսին է Աստված ուզում, որ քրիստոնյաների վերաբերմունքը լինի տալու վերաբերյալ:

Այս համարի սկզբունքը սահմանափակված չէ միայն նրանով, թե ինչպես է քրիստոնյան օգտագործում իր գումարը: Մենք այս համարը կարող ենք կիրառել այն առումով, թե ինչպես է որևէ անձնավորություն «հնազանդ վերաբերմունք տալիս» իր առաջնորդներին: «Հնազանդություն» տալը յուրաքանչյուր քրիստոնյայի համար շատ կարևոր պատասխանատվություն է հանդիսանում:

Քաջալերի՛ր նրանց, որպեսզի այս համարն օգտագործեն որպես հիմք՝ իրենց առաջնորդներին հնազանդվելու որոշում կայացնելու համար: Այս որոշումն իրական գործողության վերածելու ձևերից մեկը հնազանդ վերաբերմունքներ զարգացնելն է:

1

13. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Զարգացրո՛ւ հնազանդ վերաբերմունքներ» (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-13-րդ էջեր:

Քննարկի՛ր, թե որոնք են հնազանդ վերաբերմունքները, որ քրիստոնյաները պետք է զարգացնեն: Դու կարող ես խնդրել քո ուսանողներին՝ հնազանդ վերաբերմունքները գրել այն վերաբերմունքների կողքին, որոնք հեշտացնում են իրենց առաջնորդներին չհնազանդվելը. Ուսանողի ձեռնարկ, էջ 8: Նրանք պետք է կարողանան տեսնել, որ այս երկու ցուցակներն իրար հակառակ են:

> **Հնազանդ վերաբերմունքներ**
>
> 1. Հարգալից վերաբերմունք
>
> 2. Ենթարկվող վերաբերմունք
>
> 3. Երախտապարտ (շնորհակալ) վերաբերմունք
>
> 4. Լուռ վերաբերմունք
>
> *Ուսանողի ձեռնարկ, 9-13-րդ էջեր*

Այս չորս հնազանդ վերաբերմունքները քննարկելիս նշի՛ր, որ սրանք միակ հնազանդության վերաբերմունքները չեն: Այնուամենայնիվ, այս չորսը կարող են երկար ժամանակ նրանց օգնել, որ հնազանդ գործողություններով արձագանքեն իրենց առաջնորդներին:

Ուսանողի ձեռնարկն այս նյութը ներկայացնում է երկու դասակարգով: Առաջին. **ի՞նչ է վերաբերմունքը**: Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են դրանցից յուրաքանչյուրը նկարագրող սահմանումը: Երկրորդ. **ինչպե՞ս կարող ես հնազանդ վերաբերմունք զարգացնել**: Այս երկրորդ մասը շատ ավելի դժվար է, քան առաջինը:

Փորձի՛ր մի քանի օրինակ բերել, թե ինչպես կարող ենք վերոնշյալ հնազանդ վերաբերմունքներն արտահայտել մեր առաջնորդների հանդեպ: Բե՛ր օրինակներ քո կյանքից կամ այլոց օրինակներ, որոնք դու վերջերս ես նկատել:

Մեկ այլ ձև՝ այս հնազանդ վերաբերմունքները ներկայացնելու համար, քննարկելն է, թե ինչպես էր Հիսուսը դրանք օգտագործում: Նա այս վերաբերմունքները ցույց էր տալիս Իր առաջնորդների, ինչպես նաև՝ Իր Հոր հետ փոխհարաբերությունների ժամանակ:

Ասա՛ քո ուսանողներին. հնազանդ վերաբերմունքներ զարգացնելու վրա աշխատելիս դուք կտեսնեք, որ շատ ավելի հեշտ է դառնում ձեր առաջնորդներին հնազանդվելը:

14. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Մարդուն հնազանդվելը հիմնված է սիրո վրա» (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 14-15-րդ էջեր:

Դասի այս մասը ներկայացնելու համար քննարկե՛ք, թե ինչու պետք է քրիստոնյան ցանկանա հնազանդվել իր առաջնորդին: Քննարկումն այստեղ հիմնականում կենտրոնացրո՛ւ այն բանի վրա, թե որն է իրենց առաջնորդներին հնազանդվելու նրանց դրդապատճառը:

Սկզբում դու կարող ես քո ուսանողներին խնդրել՝ գրել մի քանի տարբեր դրդապատճառներ, որոնք մարդիկ կարող են ունենալ իրենց առաջնորդներին հնազանդվելու համար: Իրենց բոլոր մտքերը թվարկելուց հետո ավելացրո՛ւ հետևյալ դրդապատճառներից այն, որը (որոնք) նրանք բաց են թողել:

1. Պատժվելու վախը:
2. Քո առաջնորդի աչքը մտնելը:
3. Մեղավորության զգացումը:
4. Սերը:

Նշի՛ր, որ լավագույն դրդապատճառը սերն է: Սերը շատ ավելի է հեշտացնում քո առաջնորդին հնազանդվելը, քան որևէ այլ դրդապատճառ: Եթե սերն է քո դրդապատճառը, քեզ համար ավելի հեշտ է լինում դեմ կանգնել քո առաջնորդին չհնազանդվելու փորձություններին:

1

Ներկայացրո՛ւ Ուսանողի ձեռնարկի 14-15-րդ էջերում բերված երեք ենթակետերը: Ուշադի՛ր եղիր, որպեսզի ընդգծես, որ սա լավագույնս գործում է այն դեպքում, եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել: Աստված քեզ ուժ կտա, որ սիրով հնազանդվես քո առաջնորդներին:

> **Մարդուն հնազանդվելը հիմնված է սիրո վրա**
>
> 1. Աստված քեզ ասել է, որ սիրես մարդկանց այնպես, ինչպես ինքդ քեզ ես սիրում:
> 2. Հիսուսը քեզ ասել է՝ սիրել մարդկանց այնպես, ինչպես Ինքն է սիրում քեզ:
> 3. Եթե դու չսիրես քո առաջնորդներին, չես կարողանա հնազանդվել նրանց:
>
> *Ուսանողի ձեռնարկ, 14-15-րդ էջեր*

Մատնանշի՛ր, որ մենք չենք ծնվում մեր առաջնորդներին հնազանդվելու ցանկությամբ. դա մի բան է, որը մենք սովորում ենք:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ շատ աշխատեն սիրով հնազանդվելու ուղղությամբ: «Ես կհնազանդվեմ իմ առաջնորդներին, որովհետև սիրում եմ Աստծուն և սիրում եմ նրանց (իմ առաջնորդներին)»:

15. Անցկացրո՛ւ Ե. կետը. «Ուղեցույց՝ օգնելու քեզ՝ քո առաջնորդներին սիրով հնազանդվելու համար» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 16-18-րդ էջեր:

Քննարկի՛ր ուղեցույցը, որն օգնում է մարդուն՝ իր առաջնորդներին սիրով հնազանդվելու համար: Ուսանողի ձեռնարկի 16-18-րդ էջերում գտնվող նյութը հիմնված է Institute in Basic Life Principles-ի սեմինարի նշումների վրա: Եթե մասնակցել ես այդ սեմինարին, դու կարող ես անդրադառնալ քո նշումներին՝ այս թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

Փորձի՛ր մի քանի պատկերավոր օրինակներ բերել այդ երեք խոշոր կետերից յուրաքանչյուրի համար: Քո ուսանողներից ոմանք, ովքեր համաձայն չեն լինի սրա հետ, հնարավոր է՝ բերեն օրինակներ, որոնք բացառություններ կլինեն նշված կետերի համար: **Թույլ մի՛ տուր նրանց, որ երևակայական հարցեր բարձրացնեն**: Եթե նրանք ունեն օրինակներ իրենց կյանքից, քաջալերի՛ր, որ կիսվեն դրանցով դասարանի հետ: Բայց ժամանակ

մի՛ կորցրու՝ փորձելով պատասխանել մտացածին իրավիճակների հետ կապված հարցերին:

3-րդ կետը՝ **«Իսկ ի՞նչ անել, եթե դու չես վստահում քո առաջնորդին»,** քննարկելիս դու կարող ես նշել, որ որոշ առաջնորդներ չարաշահում են իրենց դիրքը և ճիշտ չեն կատարում իրենց տրված առաջնորդական պարտականությունները: Նշի՛ր, որ 4-րդ գլխում մենք կխոսենք այն հարցի շուրջ, թե ինչ պետք է անես, երբ քո առաջնորդը քեզ հանձնարարում է կատարել մի գործ, որը մեղք է:

Բայց և այնպես, քո դասարանում, հնարավոր է, լինեն մարդիկ, ովքեր իրենց ընտանիքում ենթարկվել են բռնության՝ սեռական, ֆիզիկական, զգացմունքային կամ խոսքերով: Մենք 4-րդ դասաժամին կխոսենք նաև այն մասին, թե ինչ է պետք անել, եթե մարդը գտնվում է բռնության ենթարկման իրավիճակում:

16. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Այսօրվա դասի անձնական կիրառության համար նրանք թող նշեն չորս ձևեր, որոնցով կարող են իրենց առաջնորդներին ցույց տալ, որ ուզում են նրանց հնազանդվել: Թող նրանք ընտրեն դրանցից մեկն ու կատարեն դա: Բացատրի՛ր, թե ինչպես է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդն օգտագործվելու՝ օգնելու համար նրանց, որպեսզի գրի առնեն իրենց այս փորձառությունը:

Դու կարող ես բարձրացնել նաև իրենց առաջնորդներին հնազանդվելու որոշում կայացնելու հարցը: Եթե զգում ես, որ դա կօգնի, դասն ավարտի՛ր որոշում կայացնելու աղոթքով: Քաջալերի՛ր, որ նրանցից ամեն մեկն անձնականացնի այդ աղոթքը:

17. Հանձնարարություններ:

Ա. Եթե դեռ չես արել, բաժանի՛ր այս դասընթացի՝ Ուսանողի ձեռնարկները: Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար: Հորդորի՛ր նրանց, որ 1-ին գլուխը նորից կարդան՝ այսօրվա դասաժամին անցած թեմաները վերանայելու նպատակով:

1

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի՝ *«Նայել առաջնորդներին»* բաժնի համար: Խնդրում եմ, հաշվի՛ առ, որ այս նախագծի համար կա Պատասխաններ բաժինը: Այն գտնվում է սույն Ուսուցչի ձեռնարկի Ուսուցման ուղեցույցից անմիջապես հետո:

Գ. Բացատրի՛ր, որ նրանք Ուսուցման ուղեցույցի 3-րդ և 4-րդ նախագծերի հանձնարարությունները պետք է կատարած լինեն մինչև հաջորդ դասը:

Դ. Եթե մինչև 2-րդ դասն անցնելը մի քանի օր կամ շաբաթ կա, դու կարող ես ուսանողներին հանձնարարել, որ լրացնեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ *«Որոշում՝ հնազանդվելու իմ առաջնորդներին»* բաժինը: Սակայն եթե մյուս դասն ուսուցանելու ես անմիջապես հաջորդ օրը, ապա նրանց հավելյալ ժամանա՛կ տուր այն լրացնելու համար՝ հաշվի առնելով մյուս հանձնարարությունները:

18. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.
Հնազանդության երեք մակարդակները

2

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Քրիստոնյաները պետք է զարգացնեն իրենց առաջնորդներին հնազանդվելու հասուն ձևեր:

2. **Բանալի համար:**

Եփեսացիներին 6:1. «Զավակնե՛ր, ձեր ծնողներին հնազա՛նդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Մենք կօգտագործենք նաև Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը, 4-րդը և 5-րդը: Նախագիծ 2-րդը նույնպես կարող է օգտագործվել այստեղ՝ հատկապես դասի ջերմացման գործողության մեջ:

4. **Զգուշացրո՛ւ քո առաջնորդներին:**

Դու կարող ես զգուշացնել քո կամ ուսանողների առաջնորդներին այսօրվա դասի բովանդակության վերաբերյալ: Այսօրվա դասը մեծ շեշտ է դնում այն բանի վրա, որ ուսանողները փորձեն պարզել հիմնական պատճառը, թե ինչու են իրենց առաջնորդները տվյալ հանձնարարությունները տալիս իրենց:

Տեղեկացրո՛ւ քո առաջնորդներին, որ քո ուսանողներից ոմանք տվյալ կանոնին կամ առաջնորդի տված հրահանգին հնազանդվելու վերաբերյալ կարող են նրանց հարցեր ուղղել ոչ այնքան պատշաճ ձևով, որի դեպքում իրենք պետք է զգայուն լինեն և, եթե անհրաժեշտ լինի, նրանց ավելի շատ շնորհ ցույց տան պատասխանելիս:

2

5. Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):

Դասը սկսելու համար դու կարող ես օգտագործել հետևյալ գործողություններից մեկը կամ երկուսն էլ:

Ա. Խնդրի՛ր քո ուսանողներին, որ կիսվեն իրենց պատասխաններով, որոնք ներկայացրել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդում. «Որոշում՝ հնազանդվելու իմ առաջնորդներին»: Սա դասարանին կարող է տալ մի քանի ընթացիկ իրավիճակների օրինակներ, ըստ որոնց նրանք հնարավորություն էին ունեցել հնազանդվել իրենց առաջնորդներին: Եթե քո ուսանողները ժամանակ չեն ունեցել այս նախագիծը լրացնելու համար, խնդրի՛ր նրանց՝ կիսվել, թե ինչ հնարավորություններ են ունեցել իրենց առաջնորդներին հնազանդվելու (կամ չհնազանդվելու) համար:

Այս գործողության հիմնական նպատակը ընթացիկ իրավիճակներ ներկայացնելն է, որոնցում նրանք հանդիպում են իրենց առաջնորդներին հնազանդվելու խնդրին: Ուսանողները կարող են նաև կիսվել օրինակներով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդից. «Իմ առաջնորդներին հնազանդվելու իմ փորձառությունը»:

Բ. Թող քո ուսանողները գրեն բնութագրական բառեր, որոնք նկարագրում են մարդկանց, ովքեր չեն ուզում ապրել ըստ կանոնների (երկրի օրենքների):

Օրինակ՝ օրենքից դուրս, ըմբոստ, ապստամբ, անհնազանդ և այլն:

6. Վերանայե՛ք առաջին դասի առանցքային կետերը (5 րոպե):

Դու կարող ես արագ վերանայել առաջին դասի առանցքային կետերը, որոնք հիմք են հանդիսանում այսօրվա դասի համար:

Եթե նրանք իրենց առաջնորդներին հնազանդվելու որոշում արդեն կայացրել են, ապա ամուր հիմք կունենան այսօրվա դասը կառուցելու համար: Այսօր մենք կքննարկենք հնազանդ ապրելակերպի երեք փուլերը:

Եթե իրենց առաջնորդներին հնազանդվելու դրդապատճառը հիմնված է սիրո վրա, դա նրանց ուժ կտա՝ հաստատուն լինել և արագ առաջ գնալ հնազանդ ապրելակերպի այս փուլերով:

2

7. Ուսման հետ կապված՝ առաջ գնալու օրինակներ երեք փուլերի վերաբերյալ (2-3 րոպե):

Այսօրվա նոր նյութը ներկայացրո՛ւ հետևյալ պատկերավոր օրինակով: Վեց տարեկան երեխայի համար շատ դժվար է համալսարան գնալը: Մարդը պետք է սկզբում ավարտի հիմնական դպրոցը, իսկ հետո նաև ավագ դպրոցը՝ լավ գնահատականներով: Միայն հետո ավագ դպրոցի վկայականով նա համեմատաբար հեշտությամբ կարող է ընդունվել համալսարան:

Ճիշտ նույն ձևով հնազանդության երեք փուլերը պետք է մեկ առ մեկ հաղթահարել՝ սկսելով առաջին փուլից:

8. Ներկայացրո՛ւ հնազանդության երեք մակարդակները (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 19-25-րդ էջեր:

Արագ ներկայացրո՛ւ հնազանդության երեք մակարդակները:

Հնազանդության երեք մակարդակները

1. Հնազանդվի՛ր, քանի որ քեզ ասել են, որ անես դա:
2. Հնազանդվի՛ր և պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես:
3. Հնազանդվի՛ր քո կամքով (քանի որ դու ուզում ես), (քանի որ այդպես անելը ճիշտ է):

Ուսանողի ձեռնարկ, 19-25-րդ էջեր

Դու կարող ես քննարկել, թե ինչ կապ ունեն այս երեք մակարդակները վերոնշյալ 7-րդ կետում բերված սովորելու օրինակի հետ:

Այս դասաժամին 1-ին մակարդակը ներկայացնելիս ամենասկզբից մատնանշի՛ր, որ մենք կոչ չենք անում **կույր հնազանդության**: Մենք նրանց կոչ ենք անում **զիտակցված հնազանդության**: Եթե 1-ին մակարդակը դուրս բերենք ընդհանուր դասի համատեքստից և դասի մնացած հատվածն անտեսենք, ապա կարելի է սխալ եզրակացության գալ այն հարցում, թե ինչ ենք մենք այստեղ սովորեցնում:

Դու կարող ես քո ուսանողներին օգնել հասկանալ, որ 1-ին մակարդակի հիմնական միտքը ընտրությունն է հնազանդվելու և չհնազանդվելու միջև: Նշի՛ր, որ այս դասընթացում՝ ավելի ուշ, մենք կքննարկենք այն հարցը, թե ինչ

պետք է անել, եթե նրանց առաջնորդը դարձյալ պնդում է, որ կատարեն մի բան, որը նրանց կարծիքով սխալ է: Եթե նրանք սկսեն այս խնդրի վերաբերյալ հարցեր տալ, ասա՛ նրանց, որ մենք այդ մասին կխոսենք 4-րդ դասին:

2

9. Սահմանի՛ր և նկարագրի՛ր հնազանդության երեք մակարդակները (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 19-25-րդ էջեր:

Կրկին անդրադարձի՛ր այս երեք մակարդակներին և մանրամասնորեն բացատրի՛ր, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ է իրենից ներկայացնում: Յուրաքանչյուր մակարդակի վերաբերյալ մի քանի օրինակնե՛ր բեր:

Այս դասի ծրագրի 10-15-րդ կետերը պարունակում են լրացուցիչ գործողություններ, որոնք դու կարող ես օգտագործել հնազանդության երեք մակարդակներն ուսուցանելու համար: Կարող ես անցնել այս երեք մակարդակներով, իսկ հետո վերադառնալ և ավելի խորը հայացք գցել դրանցից ամեն մեկին՝ օգտագործելով հետևյալ լրացուցիչ գործողությունները:

Առաջին մակարդակ. Այս մակարդակը կենտրոնանում է հնազանդ վերաբերմունքի վրա: «Ես ուզում եմ հնազանդվել Աստծուն և հնազանդվել իմ առաջնորդներին»: Մեր ուսանողները պետք է աճեն այնքան, որ նրանց նորմալ արձագանքը լինի՝ «Ես կհնազանդվեմ», երբ նրանց առաջնորդը նրանց ինչ-որ հանձնարարություն տա:

Քո ուսանողներից ոմանք, հնարավոր է, սովորություն ունենն մշտապես հարցի տակ դնել իրենց առաջնորդի ասածները՝ նախքան հնազանդվելու կամ չհնազանդվելու որոշում կայացնելը:

Երկրորդ մակարդակ. Որպես առաջնորդներ՝ մենք պետք է համբերատար լինենք այն ուսանողների հանդեպ, ովքեր չեն կարողանում կիրառել 2-րդ մակարդակը: Նրանք, նախքան հնազանդվելը, կարող են հարցնել. «Ինչո՞ւ»: Առաջնորդը սա կարող է տեսնել որպես ըմբոստության արտահայտություն, ոչ թե որպես քայլ՝ հնազանդ վերաբերմունք ունենալու: Միգուցե մենք՝ որպես առաջնորդներ, ճիշտ կլինի, որ ընդունենք նրանց հարցը և սիրով պատասխանենք դրան՝ չնայած այն բանին, որ նրանց վերաբերմունքը կարող է այնքան էլ ճիշտ չլինի:

Մի քանի անգամ Հիսուսը մարդկանց վերաբերվեց որպես անկեղծ փնտրողների՝ չնայած այն բանին, որ նրանք այլ դրդապատճառներ ունեին:

Օրինակ՝ օրինաց վարդապետի հարցը, որն առիթ հանդիսացավ Բարի սամարացու պատմության համար: Տե՛ս Ղուկաս 10:25-37:

Երրորդ մակարդակ. Որոշ ուսանողներ ուզում են անմիջապես ցատկել 3-րդ մակարդակ՝ մի քանի փոքրիկ վերանայումներով: Նրանք ցանկանում են ինքնուրույն լինել, որպեսզի հաստատեն իրենց կանոնները և անեն այն, ինչ իրենք են ուզում: Սակայն 3-րդ մակարդակը սրան չի վերաբերում, քանի որ այս մակարդակում էլ մարդիկ շարունակում են գտնվել իշխանության ներքո: Սակայն նրանց մոտ հնազանդությունը գալիս է նախքան իրենց առաջնորդից հանձնարարություն ստանալը:

2

10. Օրինակ՝ 1-ին մակարդակի համար. Աբրահամն ու Իսահակը (3-5 րոպե):

Աստվածաշնչյան պատմությունը, թե ինչպես է Աբրահամն իր որդուն՝ Իսահակին, որպես ողջակեզ մատուցում Աստծուն, 1-ին մակարդակի լավ օրինակ է՝ կապված Իսահակի հնազանդության հետ: Դա նաև լավ օրինակ է Աբրահամի վերաբերյալ՝ հնազանդվելու Աստծուն 1-ին մակարդակում: Տե՛ս Ծննդոց 22-ը:

Իսահակը հավանաբար պատանի էր, երբ այս պատմությունը տեղի ունեցավ: Աստվածաշունչն ասում է, որ Իսահակը թույլ տվեց, որ իրեն կապեն ու դնեն զոհասեղանի վրա՝ շատ լավ գիտակցելով, թե ինչ էր տեղի ունենալու: Սուրբ Գրքում ոչ մի տեղ գրված չէ, որ նա ամբողջական բացատրություն պահանջեց հորից, թե ինչո՛ւ էր վերջինս այդպես վարվում:

11. Օրինակ՝ 2-րդ մակարդակի համար. Քննարկե՛ք Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 3-րդը Դանիելի վերաբերյալ (5-10 րոպե):

Այս կետում ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար նրանց պատասխանները, որ տվել են Դանիել 1-ին գլխի վերաբերյալ՝ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինում: Դանիելն իր գործողություններով ցույց տվեց, որ ի վիճակի է գործել 2-րդ մակարդակի դիրքում, և պարզեց պատճառը, թե ինչո՛ւ էր թագավորը նրանց պատվիրել, որ ուտեն թագավորի սեղանի ուտելիքից: Դանիելը չեզրակացրեց. «Թագավորը պարզապես փորձում է մեզ դրդել, որ դեմ գնանք մեր կրոնական ուսմունքին»: Դանիելն իր վերաբերմունքով, խոսքով ու գործողություններով ցույց տվեց, որ ուզում է տարբերակ գտնել՝ թագավորին հնազանդվելու և, միևնույն ժամանակ, հնազանդվելու նաև Աստծուն: Դա նրան հաջողվեց իր որոշման շնորհիվ՝ հնազանդվել թե՛ Բաբելոնի հեթանոս թագավորին, թե՛ Աստծուն:

2

12. Դանիելը հնազանդվում է 3-րդ մակարդակում (5-10 րոպե):

Դու կարող ես օգտագործել Դանիել 1-ին գլխի պատմությունը՝ ցույց տալու համար, թե ինչպես էր Դանիելը վարվում նաև 3-րդ մակարդակում: Նրա ծնողները և կրոնական առաջնորդներն այնտեղ չէին, որպեսզի նրան ասեին, թե ինչ պետք է նա աներ և ինչ չպետք է աներ: Դանիելը գիտեր, թե ինչ է Աստծո օրենքն ասում որոշ տեսակի ուտելիքների մասին: Նա որոշեց հնազանդվել իր կամքով՝ առանց մյուս հավատացյալների կամ առաջնորդների հատուկ օգնության:

Դանիելի որոշումը՝ իր կամքով հնազանդվել Աստծո օրենքին, հստակ նշան էր այն բանի, թե ինչ տեսակի կյանք էր նա որոշել ապրել: Դանիելն ուզում էր հնազանդ ապրելակերպ ունենար՝ հնազանդվելով թե՛ Աստծուն, թե՛ մարդուն:

13. Երկրորդ մակարդակ. Ինչպե՞ս ես պարզում հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ ինչ-որ հանձնարարություն տվել (10-20 րոպե), Ուսուցման ուղեցույց, 22-րդ էջեր:

Այստեղ շատ ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար, թե ինչպես կարող ես պարզել հիմնական պատճառը առ այն, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ այդ բանն անես: Պատանիների համար սա կարող է, իրոք, լուրջ խնդիրների առիթ դառնալ: Շատ անգամ նրանց թվում է, որ պետք է իմանան հանձնարարության պատճառը՝ **նախքան** իրենց առաջնորդին հնազանդվելը: Օգտագործի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ նրանց օրինակները:

Ընդգծի՛ր, որ իրենց առաջնորդի կողմից տվյալ հանձնարարություն տալը պարզելու դրդապատճառը պետք է լինի հնազանդ վերաբերմունքը: Մարդկանց կողմից հիմնական պատճառը պարզելու ցանկությունը չպետք է լինի ըմբոստության քայլ: Եթե նրանք իրենց վերաբերմունքով ու գործողություններով ցույց են տալիս, որ ուզում են հնազանդվել, նրանց առաջնորդները, մեծամասամբ, ավելի պատրաստակամ կլինեն՝ բացատրելու, թե ինչու են նրանց այդ հանձնարարությունը տվել:

Հաճախ լավագույն տարբերակը համբերելն է, որպեսզի տվյալ հանձնարարության հիմնական պատճառի մասին հանձնարարությունն ավարտելուց **հետո** խոսեն իրենց առաջնորդի հետ: Երկրորդ մակարդակն ասում է, որ մենք պետք է պարզենք հիմնական պատճառը, թե ինչո՛ւ են մեզ ասել, որ հանձնարարությունը կատարենք: Շատ անգամ մենք կարող ենք պարզել պատճառն անգամ առանց համապատասխան անձնավորության

հետ խոսելու: Ինքդ քեզ տվյալ առաջնորդի դիրքում պատկերացնելով՝ հեշտ կլինի հասկանալ, թե ինչո՛ւ է նա քեզ ասել, որ այդ բանն անես:

14. Երկրորդ մակարդակ. Դերակատարումով գործողություններ (10-20 րոպե):

Հաճախ ուսանողներն ընդհանրապես պատկերացում չեն ունենում, թե որն է այս կամ այն կանոնի հիմնական պատճառը: Այս գործողության նպատակն այն է, որ նրանք կարողանան տեսնել, թե որն է հիմնական պատճառ(ներ)ը, որ նրանց առաջնորդները այս կամ այն կանոնն են հաստատել:

Ա. Որոշի՛ր կանոններ այս դերակատարման մեջ օգտագործելու համար:

Մի տարբերակ է՝ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ում քո ուսանողների գրած իրավիճակներն այս դերակատարման համար օգտագործելն է: Սկզբում թվարկի՛ր մի քանի կանոններ: Դու կարող ես սրանք նախապես անել, կամ էլ թույլ տալ, որ ուսանողները քեզ օրինակներ տան: Տարբերակներից մեկն էլ կարող է լինել հետևյալը՝ ընտրեն այնպիսի կանոններ, որոնց դեպքում նրանց համար ամենադժվարն է եղել հնազանդվելը:

Եթե դու սա ուսուցանում ես Թին Չելենջի կենտրոնի շրջանակներում, ուրեմն այս գործողությունը կազմակերպի՛ր այդ կենտրոնի կանոնների հիման վրա:

Եթե դու այս դասն ուսուցանում ես եկեղեցու շրջանակներում, կարող ես ընտրել կանոններ, որոնք կապ ունեն քո ուսանողների մեծ մասի հետ: Եթե նրանք բոլորը պատանիներ են, դու կարող ես օգտագործել այնպիսի կանոններ, որոնց հնազանդվելը սովորաբար նրանց ծնողներն են նրանցից պահանջում: Եթե նրանք մեծահասակներ են և տնից հեռու են գտնվում, դու կարող ես օգտագործել իրենց աշխատավայրի կամ բնակավայրի կանոնները, օրինակ՝ ճանապարհային երթևեկության կանոններ, հարկային օրենքներ կամ այլ օրինակներ, որոնք կապ ունեն իրենց ներկա ապրելակերպի հետ:

Բ. Թող նրանք գրեն, թե ո՛րն է մեր առաջնորդների կողմից տվյալ կանոնը սահմանելու հիմնական պատճառը:

Տարբերակ 1-ին. Թող ուսանողները գրեն, թե ինչ են մտածում՝ ո՞րն է հիմնական պատճառ(ներ)ը, որ մեր առաջնորդները հաստատել են տվյալ կանոնը: Մատնանշի՛ր, որ կանոնները կարող են մի քանի պատճառներ ունենալ, սակայն նրա՛նք պետք է կողմնորոշվեն, թե, իրենց կարծիքով, ո՛րն է հիմնական պատճառը:

Տարբերակ 2-րդ. Թող քո ուսանողները բաժանվեն զույգերի կամ 3-4 հոգանոց փոքր խմբերի և միասին որոշեն, թե, իրենց կարծիքով, ո՞րն է հիմնական պատճառը, որ իրենց առաջնորդները հաստատել են այդ կանոնը: Թող նրանք գրեն իրենց եզրակացությունները:

Ցանկացած տարբերակ կիրառելիս թող մի քանի ուսանողներ կիսվեն իրենց պատասխաններով ամբողջ դասարանի հետ: Խնդրի՛ր նրանց՝ բացատրել իրենց պատասխանները:

Դու, հնարավոր է, նկատես, որ որոշ ուսանողներ այնպիսի եզրակացության են գալիս, ըստ որի՝ «նրանք ուզում են ինձ վերահսկել»-ն է տվյալ կանոնի գոյության հիմնական պատճառը: Եվ գուցե չհամաձայնես նրանց պատասխանների հետ, սակայն նախ և առաջ թո՛ւյլ տուր, որ քո ուսանողները մեկնաբանեն՝ նախքան դու կներկայացնես քո կարծիքն ու ընդհանուր գնահատականը, թե որն է տվյալ կանոնի գոյության հիմնական պատճառը:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ խնդրեն իրենց առաջնորդներին՝ պարզաբանել որոշ կանոնների գոյության պատճառը: Սակայն զգուշացրո՛ւ նրանց, որ երբ այս հարցով դիմում են նախքան հնազանդվելը, իրենց առաջնորդների մոտ կարող է տպավորություն ստեղծվել, որ նրանք հակառակվում են, ոչ թե պարզապես ուզում են իմանալ կամ պարզել:

Գ. Դերակատարում. Հարցնել քո առաջնորդին, թե որն է տվյալ կանոնի գոյության հիմնական պատճառը:

Թող քո ուսանողները ստանձնեն առաջնորդի և ուսանողի (ծնողի և երեխայի) դերերը և բեմականացման միջոցով ցույց տան, թե ինչպես կարելի է պարզաբանում խնդրել, թե որն է տվյալ կանոնի գոյության հիմնական պատճառը: Դու կարող ես որոշ առաջնորդների դիմել, որ մասնակցեն դերակատարմանը, կամ, պարզապես, քո ուսանողները կարող են դա անել:

Ուսանողներից մեկը կլինի առաջնորդը, ով հրահանգներ է տալիս կամ կանոններ է սահմանում, իսկ մյուս(ներ)ը կլին(են)ի նա (նրանք), ով(քեր) պետք է ենթարկվ(են)ի նրա հրահանգներին:

Սա, հավանաբար, ավելի լավ կաշխատի, եթե նախօրոք որոշեք, թե ինչ կանոնի շուրջ է այդ խումբն իրականացնելու դերակատարումը: Նրանց տո՛ւր ընդամենը երկու րոպե պատրաստվելու համար: Թող նրանք դա ներկայացնեն ամբողջ դասարանի առաջ:

Եթե վստահ չլինես, որ քո ուսանողները երկու դերերն էլ կկատարեն, կարող ես ցուցումները մանրամասն գրել: Տե՛ս այս Ուսուցչի ձեռնարկի 33-35-րդ էջերը, որտեղ դրա համար օրինակ կա:

Դու նույնիսկ կարող ես նույն կանոնի զանազան տարբերակներ հանձնարարել տարբեր խմբերի: Օրինակ, մի դերակատարումը թող լինի ըմբոստ անձնավորության մասին, ով հարցը տալիս է սխալ ձևով՝ ըմբոստանալով առաջնորդի դեմ: Կամ, թող առաջնորդը շատ վատ ձևով պատասխանի՝ չարաշահելով իր առաջնորդական դիրքը: Այնուհետև մեկ այլ խմբի հանձնարարի՛ր այս նույնը անել ճիշտ ձևով, այսինքն՝ կամ իշխանություն ունեցողի տեսակետից, կամ էլ իշխանությանը ենթարկվողի տեսակետից:

Եթե հնարավոր է՝ տեսաձայնագրե՛ք այս դերակատարումը: Ձայնագրելուց հետո սա հրաշալի միջոց կլինի հետագայում այն վերանայելու, կամ նորից դիտելու և քննարկելու համար, թե ինչպես վարվեց տվյալ իրավիճակում իշխանություն ունեցողը, ինչպես նաև՝ իշխանությանը ենթարկվողը:

Դերակատարում հնազանդության երեք մակարդակների վերաբերյալ

Ահա մի պարզ դերակատարում, որ կարող է օգտագործվել 2-րդ դասի համար: Տե՛ս Դասի ծրագրի 14-Գ. կետը (սույն Ուսուցչի ձեռնարկի 32-րդ էջը)՝ տեսնելու համար, թե այդ դասի մեջ որ մասին է սա համապատասխանում:

Այս դասին դերակատարման մեթոդը կիրառելու հիմնական նպատակն ուսանողներին փորձառություն տալն է՝ ինչպե՛ս կարելի է պարզել հիմնական պատճառ(ներ)ը, թե ինչո՛ւ է իրենց առաջնորդը հանձնարարել, որ տվյալ գործը կատարեն:

Դասարանում դերակատարմանը նախապատրաստվելու համար, սովորաբար, իշխանություն ունեցողն է, որ կարիք ունի գրավոր հրահանգների. այն, թե ինչ պետք է անի կամ ասի: Ուսանողը, ով խաղում է իշխանությանը ենթարկվողի դերը, պետք է ի վիճակի լինի իր դերը կատարել առանց հատուկ հրահանգների:

Դու կարող ես ստեղծել մի քանի տարբեր դերակատարումներ՝ օգտագործելով միևնույն կանոնը:

1. Բարի, հասկացող առաջնորդ, ով խոսում է ըմբոստ, կոպիտ անձնավորության հետ:

2

2. Բարի, հասկացող առաջնորդ, ով խոսում է մի անձնավորության հետ, ով հնազանդվելու ցանկություն ունի և դա ցույց է տալիս իր վերաբերմունքով, ձայնի տոնով ու գործողություններով:

3. Դյուրագրգիռ, իշխանատենչ առաջնորդ, ով բացարձակապես հետաքրքրված չէ, որ տվյալ հարցը քննարկի մեկ ուրիշի հետ՝ անկախ նրանց ունեցած վերաբերմունքից:

Իշխանություն ունեցող անձնավորության հիմնական նպատակն այն է, որ դիմացինը հնազանդվի: Թող այդ անձնավորությունն ինքնուրույն կողմնորոշվի, թե դիմացինին երբ և ինչպես բացատրի տվյալ կանոնը կամ հրահանգը տալու իր հիմնական պատճառը:

Դերակատարման օրինակ

Թորոսը նորադարձ քրիստոնյա է, ով վերջերս է սկսել աշխատել մի փոքրիկ տպագրատանը, որի տերը քրիստոնյա է: Առավոտյան, երբ Թորոսը գործի եկավ, նրա ղեկավարը նրան ասաց, որ այդ օրվա բոլոր տպագրություններն անի հենց նոր գնված գործիքով: Թորոսը սիրում է նոր հանձնարարություններ և արագ համաձայնվում է օգտագործել նոր մեքենան: Ղեկավարի մի քանի ցուցումներից հետո Թորոսն անցնում է գործի:

Թորոսը շուտով մի բան է հայտնաբերում, որը չէր սպասում. այս նոր մեքենան շատ ավելի դանդաղ է աշխատում, քան նախորդը:
Նա չէր կարողանում իր աշխատանքն արագ կատարել: Երկու ժամ աշխատելուց հետո Թորոսը դիմում է ղեկավարին այն հարցով, թե արդյոք կարո՞ղ է իր գործը կատարել նախորդ օրը աշխատացրած մեքենայի վրա:

Հատուկ ցուցումներ ղեկավարի համար:

Երբ Թորոսը գա և դիմի քեզ, որ իր աշխատանքը կատարի նախորդ մեքենայի վրա, ասա՛ նրան, որ դա հնարավոր չէ: Հիշեցրո՛ւ, որ երբ նա առավոտյան եկավ, համաձայնեց այսօրվա ողջ գործն անել նոր մեքենայի վրա:

Եթե նա հարցնի, թե ինչո՛ւ ես ուզում, որ նա օգտագործի այս նոր մեքենան, դու կարող ես նրան ասել. «Որովհետև ես քեզ ասացի, դու էլ համաձայնեցիր»: Եթե նա համաձայնի վերստին աշխատել նոր մեքենայի վրա, դու ներկայացրո՛ւ մի քանի պատճառներ, թե ինչո՛ւ ես ուզում, որ նա այսօր օգտագործի այդ նոր մեքենան: Ահա մի քանի պարզ պատճառներ.

1. Դու ուզում ես, որ Թորոսը սովորի տարբեր մեքենաներ աշխատացնել, որպեսզի ավելի որակյալ մասնագետ դառնա տպագրության ասպարեզում:
2. Դու ուզում ես այս նոր մեքենան վաճառել քո ընկերոջը, սակայն նախապես ուզում ես համոզված լինել, որ այն նորմալ աշխատում է (սա հիմնական պատճառն է):
3. Դու ուզում ես տեսնել, թե ինչպես Թորոսը կարձագանքի մի իրավիճակի, որն այնքան էլ հաճելի չէ, ինչպես նա կակնկալեր: Դու ուզում ես տեսնել, թե ինչքանով է նա պատրաստ հնազանդվել այսպիսի իրավիճակում:

2

Դ. Գնահատի՛ր դերակատարումը:

Դերակատարումն ավարտելուց հետո նրանց ժամանա՛կ տուր քննարկելու, թե ինչը կարող էր լինել իշխանություն ունեցող անձնավորության կողմից այդ պատվերը կամ կանոնը տալու հիմնական պատճառ(ներ)ը: Նաև քննարկե՛ք, թե ինչքանով էր ճիշտ իշխանությանը ենթարկվող անձնավորության մոտեցումը. պարզել հանձնարարության հիմնական պատճառը: Դասի այս հատվածը եզրափակելիս ավելացրո՛ւ ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը նրանց կօգնի հասկանալ, թե որոնք էին տվյալ իրավիճակում տրված կանոնների կամ հանձնարարությունների հիմնական պատճառները:

Marlene LaFever-ի *Creative Teaching Methods* (David C. Cook Publishing) գիրքն ունի երկու գլուխ, որոնք կարող են շատ օգտակար լինել դերակատարման սցենար գրելիս: 5-րդ գլխում ասվում է, թե ինչպես կարող ես դերակատարումներ գրել և դրանք բեմադրել դասասենյակում: 10-րդ գլուխը վերաբերում է կոնկրետ դեպքերի ուսումնասիրմանը: Նմանատիպ մի մոտեցում է, որը քեզ կօգնի այս գործողությունները կազմակերպելու համար:

15. Ինչո՞ւ հարցնել՝ ինչո՛ւ:

Ողջ դասի ընթացքում մատնանշի՛ր, թե ինչո՛ւ ենք մենք նրանց քաջալերում՝ անցնել հնազանդության 2-րդ մակարդակ: Ինչքան նրանք լավ հասկանան հիմնական պատճառը, թե ինչո՛ւ են նրանց առաջնորդները տվյալ կանոնները սահմանել, այնքան նրանց համար ավելի հեշտ կլինի դրանց հնազանդվելը: Եվ այնքան ավելի հեշտ կլինի 3-րդ մակարդակ անցնելը, այն է՝ հնազանդվել քո կամքով:

2

16. Անձնական կիրառություն (5 րոպե):

Այսօրվա անձնական կիրառությունը ուղղի՛ր այն բանին, որ նրանցից ամեն մեկը հնազանդ կենսակերպ զարգացնելու որոշում կայացնի: Քաջալերի՛ր նրանց աղոթելու և Աստծուց ուժ ու իմաստություն խնդրելու համար՝ հնազանդ կենսակերպի երեք մակարդակները հաղթահարելու նպատակով:

Թող նրանք գրեն առնվազն մեկ իրավիճակ, որը տեղի է ունեցել վերջին մի քանի օրվա ընթացքում, երբ նրանց առաջնորդներից մեկը նրանց ինչ-որ հանձնարարություն է տվել: Թող նրանք գրեն, թե որն էր, նրանց կարծիքով, այդ հանձնարարության հիմնական պատճառը: Ասա՛ նրանց, որ դասից հետո մոտենան տվյալ առաջնորդին և խնդրեն բացատրել, թե որն է այդ հանձնարարության հիմնական պատճառը: Թող նրանք գրի առնեն՝ ինչ առաջնորդը կասի նրանց: Նրանք նաև պետք է իրենց առաջնորդին ասեն, թե, նրանց կարծիքով, որն էր եղել տվյալ հանձնարարության հիմնական պատճառը: Նրանք այս ամենը պետք է ներկայացնեն հաջորդ դասին:

17. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի, 3-րդի և 4-րդի համար, եթե դու նրանց հանձնարարել ես, որ դրանք ավարտեն մինչև այս դասաժամը: Հաշվի՛ առ, որ Նախագիծ 3-րդի համար կա «Պատասխաններ» բաժինը: Այն գտնվում է սույն Ուսուցչի ձեռնարկում ներառնված՝ Ուսուցման ուղեցույցից անմիջապես հետո:

Բ. Դասի վերջում տո՛ւր հարցաշար Հռոմեացիներին 13:1-2 հատվածի վերաբերյալ:

Գ. Դասի վերջում բացատրի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-րդը՝ **«Հնազանդվի՛ր քո կամքով»:**

Դ. Հանձնարարի՛ր ուսանողներին՝ կարդալ Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

18. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.
Ինչպե՞ս պետք է արձագանքես քո առաջնորդի հետ խոսելիս

3

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես գործնական ձևեր զարգացնելու կարիք ունեմ՝ իմ առաջնորդների հետ խոսելիս հարգանք ցույց տալու համար:

2. **Բանալի համար. Մատթեոս 7:1.**

Մի՛ ասա մարդկանց, թե ինչն է նրանց կյանքում սխալ, նրանք էլ քեզ չեն ասի, թե ինչն է քո կյանքում սխալ (բառացի թարգմանություն **New Life Bible** անգլերեն տարբերակից):

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Մենք կօգտագործենք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը՝ «Դանիելը և նրա ուտելիքը», այսօրվա դասի ժամանակ:

4. **Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):**

Ընտրի՛ր հետևյալ գործողություններից որևէ մեկը դասը սկսելու համար:

Ա. Միացրո՛ւ 2-րդ դասի դերակատարման ձայնագրությունը:

Դու կարող ես միացնել դերակատարումների մեկ կամ ավելի տեսագրություններ, որոնց ուսանողները մասնակցել են վերջին դասի ընթացքում (տե՛ս Դասի ծրագիր 2., 14-րդ կետ, 30-35-րդ էջեր): Նախքան տեսագրությունը միացնելը ուսանողներին բացատրի՛ր, որ այսօր մենք կքննարկենք այն հարցը, ըստ որի պետք է ծրագրենք, թե ինչ ենք ասելու մեր առաջնորդին: Զուտ հետաքրքրության համար ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես են տեսագրության մեջ տարբեր դերակատարներ իրենց կարծիքը հաղորդում իրենց առաջնորդներին:

3

Բ. Ուսանողական կարճ դերակատարում Դանիել 1-ին գլխի վերաբերյալ:

Թող ուսանողները պատրաստվեն Դանիել 1-ին գլխի վերաբերյալ կարճ բեմականացում ներկայացնելու համար: Նրանց ազատությո՛ւն տուր, որ գրվածին ավելացնեն այն, ինչ չի գրված Սուրբ Գրքում, միաժամանակ թույլ մի՛ տուր, որ նրանք փոխեն այն ձևը, որը Դանիելն օգտագործեց, երբ հանդիպում էր նախապատրաստում իր առաջնորդների հետ:

(Եթե դու, իրո՛ք, օգտագործես այս գործողությունը, տեսաձայնագրի՛ր այն, որպեսզի կարողանաս օգտագործել գալիք դասերի ժամանակ):

Գ. Առաջնորդների հետ հաղորդակցվելու հետ կապված խնդիրներ:

Թող նրանցից մեկը կամ երկուսը անձնական օրինակներ բերեն իրենց կյանքից, երբ ահավոր դժվարություններ են ունեցել իրենց առաջնորդների հետ հաղորդակցվելու և դրա հետ կապված հետևանքների հետ:

5. Վերանայե՛ք հնազանդության երեք մակարդակները վերջին դասաժամից:

Այսօրվա դասի նյութի քննարկումն սկսելիս մեկ կամ երկու րոպե հատկացրու՝ վերանայելու համար հնազանդության երեք մակարդակները վերջին դասաժամից:

Այսօրվա դասի ժամանակ տարբեր օրինակների հղում անելիս անդրադարձի՛ր **Հնազանդության երեք մակարդակները** բաժնին և խոսի՛ր այն մասին, թե որ մակարդակն էին այդ մարդիկ օգտագործում իրենց առաջնորդներին պատասխանելիս:

6. Ծրագրի՛ր, թե ինչ պետք է ասես քո առաջնորդին (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 26-30-րդ էջեր:

Ամուր հիմք ապահովվելու նպատակով՝ որպես այսօրվա դասաժամի քննարկման թեմա օգտագործե՛ք Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը:

Այս դասին հիմնական թեման, որը մենք ուզում ենք քննարկել, մեր պատասխանը ծրագրելու անհրաժեշտությունն է՝ նախքան մեր առաջնորդի հետ խոսելը: Սա հատկապես կարևոր է, եթե խոսակցությունն ինչ-որ կերպ կապ ունի որևէ հնարավոր կամ գոյություն ունեցող կոնֆլիկտի հետ: Օգտագործի՛ր օրինակներ նախորդ գործողություններից՝ մատնանշելու համար այն հարցի կարևորությունը, որը մենք հիմա քննարկելու ենք:

Ահա վեց հիմնական կետեր քննարկման համար:

Ա. Մի՛ մեղադրիր կամ քննադատիր քո առաջնորդներին:

Բ. Քո պատասխանը հիմնավորի՛ր քո կարծիքի վրա:

Գ. Այնպե՛ս ասա, որ օգնես քո առաջնորդին՝ հասնել իր նպատակին:

Դ. Նպատակնե՛ր դիր, թե ինչպես ես արձագանքելու, երբ որոշակի խնդիրներ ի հայտ գան:

Ե. Ժամանակային սահմանափակո՛ւմ դիր, թե երբ ես խոսելու քո առաջնորդի հետ:

Զ. Աստծո՛ւն նայիր, որպեսզի զորություն ստանաս ճիշտն անելու համար:

Ուսանողի ձեռնարկ, 26-30-րդ էջեր

Դու կարող ես համառոտ ներկայացնել յուրաքանչյուր կետը և վերադառնալ ու լավ օրինակ բերել ամեն մի քայլի համար: Հակադրի՛ր մի քանի օրինակների հետ, թե ինչպես չի կարելի դա անել. այնպիսի օրինակների, որոնք ցույց են տալիս վերը նշված վեց կետերի ճիշտ հակառակը:

7. Դերակատարումներ (10-15 րոպե):

Դու կարող ես նաև օգտագործել անցյալ դասի դերակատարումների տեսագրություններից, որպեսզի տեսնես, թե արդյո՞ք դերակատարն իր առաջնորդի հետ խոսելիս օգտագործել է նշյալ վեց քայլերից որևէ մեկը:

Բաժանի՛ր դասարանը 3-5 հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբի տուր միևնույն դերակատարումը: Թող նրանք դերակատարման մեջ այնպես ծրագրեն առաջնորդին պատասխանելը, որ օգտագործեն վերը նշված՝ առաջնորդին պատասխանելուն վերաբերող բոլոր վեց կետերը:

Նրանք, հնարավոր է, կարիք ունենան ավելացնել կամ փոփոխել առաջնորդին ուղղված պատասխանները՝ իրենց պատասխանը լրացնելու նպատակով:

3

Դու կարող ես այնպես կազմակերպել, որ սկզբում ամբողջ դասարանը դա անի միասին, որպեսզի հասկանան, թե ինչ են անելու, երբ բաժանվեն փոքր խմբերի:

Երբ բոլոր խմբերը կավարտեն գրել իրենց պատասխանները, թող դրանցով կիսվեն ողջ դասարանի հետ: Իսկ երբ ավարտեն կիսվել իրենց պատասխաններով, յուրաքանչյուր խմբի հնարավորություն տուր՝ բացատրելու, թե ինչու նրանք այդ ձևով պատասխանեցին իրենց առաջնորդին:

3

8. Դանիել 1-ին գլուխ (10-20 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3.:

Վերանայի՛ր Դանիել 1-ին գլուխը և գնահատի՛ր Դանիելի մոտեցումն իր առաջնորդներին: Փորձի՛ր կողմնորոշվել, թե դասի սկզբում տրված վեց կետերից որոնք Դանիելը կիրառեց: Այս պահին դու կարող ես քննարկել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի՝ «**Դանիելը և նրա ուտելիքը**» բաժնի բոլոր հարցերը:

9. Արձագանքել հնազանդ վերաբերմունքով (5-15 րոպե):

Ժամանա՛կ հատկացրու՝ մանրամասն քննարկելու, թե ինչպես կարող են նրանք պատասխանել իրենց առաջնորդին՝ առանց նրան քննադատելու կամ մեղադրելու: Նաև վերանայի՛ր Ուսանողի ձեռնարկի 1-ին գլխում քննարկված հնազանդ վերաբերմունքները և բացատրի՛ր, թե ինչ կապ ունեն դրանք հնազանդության այս ասպարեզի հետ: Ընդգծի՛ր հարգալից վերաբերմունք ցուցաբերելու կարևորությունը:

10. Անձնական կիրառություն (10-15 րոպե):

Այսօրվա անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ այս դասին ներկայացված վեց ուղեցույցները կիրառելուն, թե ինչպես պետք է պատասխանել առաջնորդներին: Քաջալերի՛ր նրանց, որ ամեն անգամ, երբ խոսելիս լինեն իրենց առաջնորդի հետ, ուշադրությունը կենտրոնացնեն այդ վեց ուղեցույցներից գոնե մեկի օգտագործմանը: Ընդգծի՛ր, որ նրանք ինչքան շատ են այս կետերն օգտագործում, այնքան ավելի շատ են դրանք դառնում իրենց առաջնորդին պատասխանելու բնական վիճակ:

Թող նրանք վերցնեն այն օրինակներից մեկը, որն օգտագործել էին Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդում կամ 4-րդում, որպեսզի գրեն մի նոր պատասխան, որը կներառեր այսօրվա դասին քննարկված բոլոր ուղեցույցները: Հավաքի՛ր դրանք՝ նախքան նրանք դասարանից դուրս կգան:

11. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի, 3-րդի և 5-րդի համար, եթե դու հանձնարարել էիր, որ նրանք դա ավարտեն մինչև այս դասը: Խնդրում եմ, հաշվի՛ առ, որ կա «Պատասխաններ» բաժինը՝ Նախագիծ 3-րդի և 5-րդի համար: Այն գտնվում է սույն Ուսուցչի ձեռնարկի Ուսուցման ուղեցույցից անմիջապես հետո:

Բ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Եփեսացիներին 6:1 և 3 համարների հիման վրա:

Գ. Թող ուսանող*ները կարդան Ուսանողի ձեռնարկի 4-րդ և 5-րդ գլուխները՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

3

12. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

4

Դաս 4.
Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:
Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները:

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես առօրյա հարցերում իմ առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքների մասին ամեն օր խորը մտածելու անհրաժեշտություն ունեմ:

2. **Բանալի համար. Եփեսացիներին 6:1,3.**

«Զավակնե՛ր, ձեր ծնողներին հնազա՛նդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը». «Պատվի՛ր քո հորն ու մորը». սա առաջին պատվիրանն է, որը խոստում ունի՝ «որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ և 5-րդ գլուխները համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը, 6-րդը, 7-րդը և 8-րդը նույնպես կարող են օգտագործվել այս դասին:

4. **Մե՞կ, թե՞ երկու դասաժամ:**

Այս դասը ներառում է երկու թեմա և հեշտությամբ կարող է բաժանվել երկու առանձին դասաժամերի:

1. Գլուխ 4. Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:
2. Գլուխ 5. Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները:

Եթե դու այս թեմաներն անցնես երկու առանձին դասաժամերով, ապա վերևում նշված՝ Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունն ու Բանալի

համարն օգտագործի՛ր 5-րդ գլխի («Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները») վերաբերյալ դասաժամի համար:

Եթե 4-րդ գլխի («Ի՞նչ պետք է անես, երբ քո առաջնորդը քեզ հանձնարարում է, որ ինչ-որ սխալ բան անես») վերաբերյալ առանձին դասաժամ ես ունենալու, ապա օգտագործի՛ր հետևյալները.

Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է ուշադիր լինեմ, որպեսզի Աստծո ուզած ձևով արձագանքեմ, երբ իմ առաջնորդն ինձ հանձնարարում է, որ ինչ-որ սխալ բան անեմ:

Բանալի համար. Ա Պետրոս 3:15.

> **«Այլ Տեր Աստծուն ձեր սրտերում սո՛ւրբ պահեցեք և միշտ պատրա՛ստ եղեք հեզությամբ ու երկյուղածությամբ պատասխան տալու բոլոր նրանց, ովքեր ձեզ կհարցնեն ձեր ունեցած հույսի մասին»:**

4

Եթե դու 4-րդ և 5-րդ գլուխներն անցնելու ես մեկ դասաժամով, ուրեմն դասաժամի առաջին հատվածն օգտագործի՛ր՝ քննարկելով 4-րդ գլուխը. «Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես»: Այնուհետև մնացած ժամանակն անցկացրո՛ւ մյուս թեմայի վրա՝ 5-րդ գլուխ. «Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները»:

5. Առաջարկվող ժամանակային նշումներ այս դասի ծրագրի համար:

Առաջարկվող ժամանակային նշումները կարող են քո դասաժամի համար կարգավորվել՝ կախված այն բանից, թե ինչքան ժամանակ ես դու ի վիճակի տրամադրել այս դասի նյութին: Շատ դեպքերում, եթե դու ունես երկու դասաժամ, ուրեմն կարող ես ավելի երկար ժամանակ հատկացնել յուրաքանչյուր կետի համար:

Եթե դու ուսուցանելու ես 4-րդ և 5-րդ գլուխները մեկ դասաժամով, մենք քեզ խորհուրդ ենք տալիս հատկապես որոշել, թե ինչքան ժամանակ ես բաշխելու յուրաքանչյուր գլխի ուսուցման համար առանձին: Այս որոշումը կայացնելուց հետո դու կարող ես որոշել, թե յուրաքանչյուր գլխի որ թեմաների վրա ես կենտրոնացնելու քո դասաժամը:

6. Դասի ջերմացման գործողություն (5-10 րոպե):

Ստորև դասի ջերմացման երկու գործողություն կա: Եթե դու երկու գլուխն էլ մեկ դասաժամում ես անցնելու, խորհուրդ է տրվում օգտագործել 4-րդ գլխից հետո տրված գործողությունը:

Ա. Դասի ջերմացման գործողություն 4-րդ գլխի համար:

Դասը սկսի՛ր մի պատմությամբ, որտեղ ինչ-որ մեկին իր ղեկավարը հանձնարարել է, մի բան, որը մեղք է: Դա կարող է աստվածաշնչյան պատմություն լինել կամ՝ քո կյանքից: Հարցրո՛ւ քո ուսանողներին, թե ինչ կանեին, եթե իրենք լինեին այդ իրավիճակում:

Բ. Դասի ջերմացման գործողություն 5-րդ գլխի համար:

4

Դասը սկսի՛ր՝ ուսանողներին խնդրելով մի քանի րոպե պատկերացնել, որ իրենք իշխանություն ունեցող անձնավորություն են: Թող նրանք գրի առնեն, թե ինչպես կարձագանքեին հետևյալ երկու իրավիճակներում: Դու կարող ես փոխել այս օրինակները քո դասարանի համար՝ նրանց տարիքին կամ հետաքրքրություններին համապատասխան:

1. Քո պատանի դուստրը հրաժարվել է մաքրել իր ննջասենյակը: Դու առավոտյան շատ հստակ ասել ես նրան, որ անի դա, բայց սենյակը դեռևս թափթփված է: Ինչպե՞ս կարձագանքես նրա անհնազանդությանը:
2. Քո պատանի որդին հանձնարարություն ունի՝ երեքշաբթի երեկոյան լվանալ ափսեները: Այդ երեքշաբթի դու հյուրեր ես ունեցել, այնպես որ լվանալու հավելյալ ափսեներ են հավաքվել: Քո որդին ինքնուրույն ավարտում է այդ գործը՝ առանց ափսե լվացող ավտոմատ մեքենայի օգնության: Ինչպե՞ս կարձագանքես նրա հնազանդությանը:

Երբ բոլորն իրենց պատասխանները գրած լինեն, թող մի քանի հոգի կամավոր սկզբունքով կիսվեն իրենց պատասխաններով: Ավարտի՛ր առաջին դեպքի քննարկումը՝ նախքան երկրորդ դեպքին անցնելը: Թող ուսանողները բացատրեն, թե ինչո՛ւ են ընտրել տվյալ պատասխանները:

Այս դասի 1-ին մասը. Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:

7. Դասի այս մասի հետ կապ ունեցող ուսանողական նյութեր:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է դասի այս մասի հետ:

8. Ներկայացնել այս դասի 1-ին մասը (2-5 րոպե):

Հատուկ ուշադրություն է պետք դարձնել այն իրավիճակներին, որտեղ քրիստոնյաները մտածում են, որ իրենց առաջնորդներն իրենց հանձնարարում են, որ սխալ բան անեն: Այս բաժինը ներկայացնելիս մատնանշի՛ր, որ նրանք շատ հազվադեպ կհանդիպեն նման իրավիճակների: Նրանց հանդիպող իրավիճակները հիմնականում այն դեպքերն են, երբ նրանց առաջնորդները հանձնարարում են անել մի բան, որը **ճիշտ է**:

4

Դու կարող ես այս բաժինը ներկայացնել՝ հարցնելով. «Ինչպե՞ս դու կարձագանքեիր, եթե ես քեզ ասեի, որ սխալ բան անես»: Դու կարող ես հարցն ավելի կոնկրետ դարձնել: Օրինակ, կոնկրետացրո՛ւ հարցդ՝ ասելով նրանց, որ խախտեն մի կանոն, որի մասին քո գրեթե բոլոր ուսանողները գիտեն:

Եթե այս դասն ուսուցանում ես Թին Չելենջի կենտրոնում կամ նմանատիպ այլ ծրագրի շրջանակներում, դու կարող ես նրանց տալ հետևյալ հարցը. «Թին Չելենջ գալուց ի վեր եղե՞լ է դեպք, երբ այստեղի առաջնորդներից որևէ մեկը ձեզ հանձնարարել է, որ սխալ բան անեք»:

Նաև հարցրո՛ւ նրանց՝ արդյո՞ք կարող են հիշել մի դեպք իրենց ողջ կյանքից, երբ իրենց վրա իշխանություն ունեցող մեկն իրենց հանձնարարել է սխալ բան անել: Այս կետում մի՛ խորացիր նրանց օրինակների վերաբերյալ մանրամասն քննարկումների մեջ: Ընդամենը համոզվի՛ր, որ դրանք իրականում տեղի են ունեցել:

Զգուշացում.

Այս դասի հենց սկզբից մի հիմնական կանո՛ն հաստատեք. մենք քննարկելու ենք միայն իրական դեպքեր: Մենք չենք քննարկելու մտացածին կամ երևակայական՝ «եթե»-ով իրավիճակներ՝ «Ի՞նչ անեմ, **եթե** իմ առաջնորդն ինձ հանձնարարի…»:

9. Այս դասի 1-ին մասի ամփոփում:

Ահա այս դասի 1-ին մասի ամփոփումը: Դասի ծրագրի մնացած մասը կվերաբերի հետևյալ մտքերին և թվերին՝ որպես վերնագրեր յուրաքանչյուր բաժնի համար:

Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:

1. Համոզվի՛ր, որ ճիշտ ես լսել, թե ինչ է քո առաջնորդը քեզ ասել:
   Քո հիմնական նպատակը պետք է լինի՝ արձագանքել Աստծուն հաճելի ձևով:

2. Կողմնորոշվի՛ր, թե այն, ինչ քեզ ասել են, որ անես, իրո՞ք մեղք է:
   Գուցե դա մի բան է, որին դու նայում ես որպես քո առաջնորդի կողմից ընդունված անհաջող որոշում:

3. Եթե դա մեղք է, կողմնորոշվի՛ր, թե ինչ մեղք է:
   Աստծո ո՞ր օրենքը դու կխախտես, եթե դա կատարես:

4. Պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ հանձնարարում, որ դա անես:

5. Եթե հիմնական պատճառը՝ թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես, քո օգուտի համար է (ոչ թե մեղք է), դու պարտավոր ես հնազանդվել:

6. Եթե քո առաջնորդի կողմից հանձնարարություն տալու հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ գցելն է, դու պարտավոր ես չհնազանդվել նրան:

10. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ուշադի՛ր եղիր, որ ճիշտ գնահատես, թե ինչ են քեզ ասել, որ անես» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 31-34-րդ էջեր:

Դասի ընթացքում այս կետն անցնելիս համոզվի՛ր, որ նրանք հասկանում են արագ եզրակացություններ անելու վտանգը: Քաջալերի՛ր նրանց, որ գնահատեն իրավիճակը՝ ինչպես Գեղամն արեց Ուսանողի ձեռնարկում բերված օրինակում: Քաջալերի՛ր նրանց, որ հարցեր տան՝ իրենց լսածը պարզաբանելու նպատակով, ոչ թե ենթադրեն, թե այն, ինչ իրենք լսել են, իրո՛ք, առաջնորդի հանձնարարությունն է իրենց համար:

Նաև հնարավոր է, որ նրանք իսկապես ճիշտ են լսել իրենց առաջնորդին, սակայն առաջնորդը սխալվել է և իրականում այն չի ասել, ինչ կուզենար, որ ենթականերն անեին:

4

11. Քո հիմնական նպատակն այն է, որ Աստծուն հաճելի ձևով արձագանքես (2-3 րոպե):

Հիմա, երբ դու արդեն հասել ես այս գլխի մնացած հատվածը քննարկելուն, շատ հստակ ասա՛, թե ինչպիսին պետք է լինի նրանց սրտի արձագանքը՝ «Քո հիմնական նպատակն այն է, որ Աստծուն հաճելի ձևով արձագանքես»: Ամեն անգամ, երբ քո առաջնորդը քեզ հանձնարարում է, որ սխալ (կամ ճիշտ) բան անես, քո հիմնական նպատակը պետք է լինի՝ պատասխանել այնպես, ինչպես Հիսուսը կպատասխաներ, եթե լիներ քո փոխարեն:

Դու պետք է հստակ արտահայտես հնազանդ վերաբերմունքներ և պատրաստակամություն՝ հնազանդվելու Աստծուն և քո առաջնորդներին, երբ նրանց հետ քննարկում ես քեզ հանդիպած որևէ խնդիր: Սա նաև վերաբերում է քո ունեցած դրդապատճառին: Դու ուզո՞ւմ ես քո սերն արտահայտել Աստծո և քո առաջնորդների հանդեպ տվյալ իրավիճակում:

4

12. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ հանձնարարում, որ դա անես» (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 34-35-րդ:

Ուսանողի ձեռնարկի 27-րդ էջը լրացուցիչ տեղեկություններ է տալիս մի քանի հնարավոր պատճառների վերաբերյալ, որոնք առաջնորդը կարող է ունենալ քեզ այնպիսի հանձնարարություն տալու համար, որը, քո կարծիքով, մեղք է:

Այս դասընթացում մենք արդեն քննարկել ենք, թե ինչպես պետք է անձը պարզի իրեն տրված հանձնարարության հիմնական պատճառը: Դասընթացի այդ հատվածում տրված ուղեցույցները համապատասխանում են նաև այս հատվածին: Դու կարող ես արագ վերանայել այդ ուղեցույցները:

Ահա երեք հարցեր, որոնք դու կարող ես ինքդ քեզ տալ՝ կողմնորոշվելու համար, թե որն է քո առաջնորդի կողմից քեզ տվյալ հանձնարարությունը տալու հիմնական պատճառը:

1. Ո՞րն է նրա նպատակ(ներ)ը:
2. Ինչպե՞ս է ինձ տրված այդ հանձնարարությունը նրան օգնելու, որ հասնի իր նպատակին:
3. Որո՞նք են այն հնարավոր պատճառները, որ նրան դրդեցին ինձ այդ հանձնարարությունը տալ (թվարկի՛ր բոլոր պատճառները՝ ըստ քո կարծիքի):

13. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Եթե հիմնական պատճառը՝ թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես, քո օգուտի համար է (ոչ թե մեղք է), դու պարտավոր ես հնազանդվել» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 35-36-րդ:

Մատնանշի՛ր, որ եթե առաջնորդի հիմնական պատճառն իմ օգուտի համար է, ուրեմն պետք է որ մի ձև լինի՝ դա անել առանց մեղք գործելու: Մենք պետք է սովորենք լինել հնարամիտ և խորագետ:

Կրկին քննարկի՛ր Դանիել 1-ին գլխի պատմությունը՝ ցույց տալու համար, որ սա մի օրինակ է, երբ Դանիելը հնազանդվեց իրավիճակին, որտեղ նրա առաջնորդների տված հանձնարարության հիմնական պատճառը նրա օգուտի համար էր: Դու կարող ես օգտագործել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը և 6-րդը:

4

14. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Եթե քո առաջնորդի կողմից հանձնարարություն տալու հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ գցելն է, դու պարտավոր ես չհնազանդվել նրան» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 36-40-րդ էջեր, և Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդ և 6-րդ:

Այս կետի վերաբերյալ նյութերը ներկայացնելիս համոզվի՛ր, որ գործ ունես իրական և ոչ թե հորինված օրինակի հետ: Անպայման անցկացրո՛ւ 3-րդ ենթակետը, որում ասվում է. «**Պատրաստակա՛մ եղիր՝ ճիշտ բան անելու հետևանքներից նեղություններ կրելու համար»:**

Քննարկի՛ր Դանիել 3-րդ և 6-րդ գլուխների պատմությունները՝ ցույց տալու համար, որ սրանք օրինակներ են, որտեղ նոր ընդունված օրենքի հետևում գտնվող հիմնական պատճառը նրանց ստիպելն էր՝ խախտել Աստծո օրենքը: Օգտագործի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը և 6-րդը՝ Դանիել 3-րդ գլխի քննարկման համար:

Այս կետի հետ կապված խնդիրներից մեկը հաճախ այն է, որ շատ քրիստոնյաներ չեն զարգացրել ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն՝ թե որն է առաջնորդի հիմնական պատճառը տվյալ հանձնարարությունն իրենց տալու համար: Նրանք համարում են, որ դրա հիմնական պատճառը վատն է: Նրանք դժվարանում են տվյալ իրավիճակին նայել առաջնորդի տեսանկյունից:

Լավ կլինի՝ պատմությունների ուսումնասիրության շարք զարգացնել, որը կարող է օգտագործվել այս դասի հետ: Եթե ուսանողները կիսվում են պատմություններով, որոնք համապատասխանում են դասի այս կետի հետ, այդ դեպքում դու կարող ես գրի առնել դրանց մանրամասնությունները, որպեսզի օգտագործես հետագա դասերի ժամանակ:

Եթե առաջնորդի հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ զցելն է, ապա դու տվյալ իրավիճակը պետք է ընդունես որպես հնարավորություն՝ հնազանդվելու Աստծուն: Մի՛ նայիր տվյալ իրավիճակին՝ որպես ընդամենը հնարավորության՝ չհնազանդվելու քո առաջնորդին:

15. Անցկացրո՛ւ Դ-4. ենթակետը. «Դո՛ւրս արի մեղքի հետ կապված իրավիճակներից» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 39-40-րդ էջեր:

Քո առաջնորդներին չհնազանդվելու մեկ այլ ասպարեզ վերաբերում է նրանց, ովքեր գտնվում են մեղքի հետ կապված իրավիճակում: Հնարավոր է՝ ծնողը սեռական բռնության է ենթարկում ընտանիքի անդամներից մեկին: Դու պետք է շատ հստակ ասես, որ Աստված ոչ մի դեպքում չի ընդունում նման բռնությունը: Նա, ով ենթարկվել է նման տեսակի բռնության, միանգամայն իրավունք ունի դուրս գալ տվյալ իրավիճակից և մասնակից չլինել դրան:

4

Սա մի պարզ իրավիճակ է, երբ դու անհրաժեշտություն չունես «Աստծուն ժամանակ տալու, որպեսզի Նա փոխի քո առաջնորդի միտքը»: Ամեն ջանք պետք է գործադրվի այսպիսի անձնավորությանը մեղքի նման իրավիճակից հնարավորինս շուտ հանելու համար: Սա, ամենայն հավանականությամբ, ընտանիքի ներսում կոնֆլիկտի առիթ կդառնա:

Նաև մատնանշի՛ր, որ բռնության ենթարկված մարդը վատ բան չի անում՝ բռնության ենթարկողի մեղքը բացահայտելով: Ցավոք, որոշ մարդիկ շատ խառը պատկերացում ունեն մեղքը բացահայտելու վերաբերյալ: Մենք պարտավոր չենք ծածկել նման ձևով բռնացող մարդկանց մեղքերը:

Այս դասի 2-րդ մասը. «Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները»:

16. Դասի 2-րդ մասին վերաբերող ուսանողական նյութերը:

Ուսանողի ձեռնարկի 5-րդ գլուխը համընթաց է դասի 2-րդ մասի հետ:

17. Գրի՛ր հնազանդության և անհնազանդության հետևանքների օրինակներ (10-20 րոպե):

Գրատախտակի կամ մեծ ստվարաթղթի վրա կազմի՛ր երկու սյունակներ: Մի սյունակում թող լինեն քո առաջնորդներին **հնազանդվելու հետևանքները**, իսկ մյուսում՝ քո առաջնորդներին **չհնազանդվելու հետևանքները**:

4

Դու կարող ես սա անել ողջ դասարանով՝ որպես մի մեծ խմբով, իսկ ուսանողներից մեկը թող գրի առնի դրանք, կամ էլ՝ կարող ես դասարանը բաժանել փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի տալ երկու ստվարաթուղթ ու ֆլոմաստերներ, որպեսզի նրանք կազմեն իրենց երկու սյունակները:

Քաջալերի՛ր նրանց, որ աստվածաշնչյան համար գրեն իրենց թվարկած յուրաքանչյուր հետևանքի դիմաց: Այս սյունակները կազմելիս նրանք կարող են օգտագործել Ուսուցման ուղեցույցի 1-ին և 7-րդ նախագծերում տված իրենց պատասխանները:

Երբ նրանք լրացնեն իրենց սյունակները, թող յուրաքանչյուր խումբ դասարանի առաջ ներկայացնի իր գրածները: Երկու ցուցակներում, բնականաբար, իրար հակառակ շատ պատասխաններ կլինեն:

Ինչքան դու այսօր շատ քննարկես սա, այնքան ամեն մեկի համար ավելի հստակ կդառնա, որ քո առաջնորդներին հնազանդվելը խելամիտ է: Քո առաջնորդներին հնազանդվելը, պարզվում է, միշտ էլ ավելի լավ է, քան չհնազանդվելը:

Ահա աստվածաշնչյան մի քանի համարներ, որոնք խոսում են քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու մասին:

Հնազանդվել մարդուն (տե՛ս նաև Ուսանողի ձեռնարկի 42-43-րդ էջերը):

Առակաց 2:2
Առակաց 2:21
Մաղաքիա 3:13
Հռոմեացիներին 6:16
Հռոմեացիներին 13:16
Եփեսացիներին 6:13
Եբրայեցիներին 5:8-9
Ա Պետրոս 2:13-17

Չհնազանդվել մարդուն (տե՛ս նաև Ուսանողի ձեռնարկի 48-49-րդ էջերը):

Բ Օրինաց 11:26-28
Ա Թագավորաց 14
Առակաց 15:10
Հռոմեացիներին 6:16,25
Հռոմեացիներին 13:1-6
Բ Կորնթացիներին 10:6
Ա Պետրոս 2:13-17

4

18. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Քո առաջնորդներին հնազանդվելու հետևանքները» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 41-44-րդ էջեր:

Կախված այն բանից, թե ինչքան ժամանակ ունես, դու կարող ես քննարկել Ուսանողի ձեռնարկի այս բաժնի առանցքային կետերից մի որոշ մաս: Քո ուսանողների համար կարող է հատկապես կարևոր լինել **3-րդ ենթակետի քննարկումը՝ «Ինչպե՞ս է հնազանդությունը փոխում իմ կյանքը»:** Այստեղ երկու հարցեր են բարձրացվում՝ ինքնակառավարման զարգացում և վստահության զարգացում: Սրանք մեծ կենսական նշանակություն ունեն առողջ և հավասարակշռված կյանք ունենալու համար:

19. Անցկացրո՛ւ Բ-1. կետը. «Որո՞նք են անհնազանդության հետևանքները» (5-10 րոպե՝ այս դասի ծրագրի 19-23-րդ կետերի համար), Ուսանողի ձեռնարկ, 44-48-րդ էջեր:

Բացատրի՛ր հետևյալ չորս հասկացությունների միջև եղած տարբերությունը, որոնք բոլորն էլ վերաբերում են անհնազանդության հետևանքներին (եթե դու սա վերջերս անցկացրել ես ***Հնազանդություն Աստծուն*** դասընթացի ժամանակ, ապա արագ վերանայելը նրանց կօգնի վերհիշել, թե ինչ են նրանք սովորել այս հասկացությունների վերաբերյալ):

Ա. Բնական հետևանքներ

Բ. Դաստիարակություն

Գ. Պատիժ

Դ. Վրեժխնդրություն

4

Այս չորս հասկացությունները քննարկելուց հետո փորձի՛ր դրանցից յուրաքանչյուրի համար օրինակ բերել և բացատրել, թե յուրաքանչյուրն ինչպիսի՞ կապ ունի քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետ: Մատնանշի՛ր, որ երբեմն մեր առաջնորդները սխալվում են և սխալ մարդու են դաստիարակում: Մեծ մասամբ մենք կարող ենք վստահ լինել, որ մեր առաջնորդները, իրոք, լավագույնն են ցանկանում մեզ համար և փորձում են ազնիվ ու անաչառ լինել: Մենք կարող ենք մեր սրտում խաղաղություն ունենալ՝ հիշելիս, որ Աստված ամեն բան տեսնում է այնպես, ինչպես այն իրականում է տեղի ունենում: Նա կվարձատրի մեզ՝ մեր առաջնորդներին հնազանդվելու համար:

20. Բնական հետևանքներ (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 45-րդ:

Ծնողը երեխային ասում է. «Մի՛ կպիր վառարանին: Այն շատ տաք է»: Եթե երեխան չլսի և դիպչի վառարանին, այդ անհնազանդ քայլի ***բնական հետևանքը*** կլինի այն, որ երեխան կվառի իր մատը:

Մատնանշի՛ր, որ բնական հետևանքները հենց դրանք են՝ գործողության բնական (ինքնըստինքյան տեղի ունեցող) արդյունքները: Այս արդյունքները նույնը չեն, ինչ՝ դաստիարակությունը կամ պատիժը: Երբ դու չես հնազանդվում քո առաջնորդներին, միշտ էլ հետևանքներ լինում են: Հնարավոր է՝ ամեն անգամ չհնազանդվելով քո առաջնորդին՝ դու չբռնվես, սակայն քո անհնազանդությունը միշտ էլ կունենա որոշակի հետևանքներ:

Անհնազանդության լուրջ հետևանքներից մեկն այն է, որ քեզ մոտ կսկսի անհնազանդ վերաբերմունք ձևավորվել քո առաջնորդների հանդեպ: Այսպիսի անհնազանդ վերաբերմունքը կդժվարացնի քո առաջնորդներին հնազանդվելը նաև հետագա իրավիճակներում:

Գաղատացիներին 6:7-10.

Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվի, որովհետև մարդը ինչ-որ ցանում է, այն էլ պիտի հնձի: Իր մարմնի համար ցանողն իր մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար ցանողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի: Եկե՛ք բարին գործելուց չհոգնենք, որովհետև իր ժամանակին պիտի հնձենք, եթե չթուլանանք: Ուրեմն, քանի դեռ առիթ ունենք, բարիք անենք բոլորին, հատկապես նրանց, ովքեր հավատի ընտանիքին են պատկանում:

Նշի՛ր, որ Աստված չի արհամարհում մեր որոշումները: Մենք հնձելու ենք մեր հնազանդվելու կամ չհնազանդվելու որոշումների հետևանքները:

4

21. Դաստիարակություն (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 46-րդ:

Շատ անգամ, երբ դու անհնազանդ լինես քո առաջնորդներին, նրանք քեզ կդաստիարակեն: ***Դաստիարակելը*** ենթադրում է խնդրի ուղղում: Դաստիարակության նպատակը տվյալ անձնավորությանն օգնելն է, որպեսզի նա հնազանդվելու որոշում կայացնի, երբ հաջորդ անգամ հայտնվի նույն իրավիճակում: **Եբրայեցիներին 12:7-11-ը** բացատրում է, թե ինչու են մեր առաջնորդները դաստիարակում մեզ:

Աստվածաշնչյան որոշ թարգմանություններում դաստիարակություն բառի փոխարեն օգտագործում են «պատիժ» բառը: Նման դեպքում թարգմանողը դաստիարակության և պատժի միջև այդ նուրբ տարանջատումը չի նկատում կամ անտեսում է՝ ի տարբերություն այս դասի շրջանակներում մեր մոտեցման: Շատ դեպքերում նրանց մոտ պատիժ բառն օգտագործվում է ավելի լայն իմաստով և ներառում է դաստիարակության ու պատժի բոլոր տեսակները:

Դաստիարակությունն իր մեջ հույսի տարր է կրում: Դաստիարակությունը տրվում է այն հույսով, որ այն դրական փոփոխություններ կբերի անհնազանդ մարդու կյանքում: Ինչպիսի դաստիարակություն էլ իրականացվի, այն անպայման պետք է ազդի մարդու վրա, որպեսզի նա ավելի լավ հասկացողություն ձեռք բերի ճիշտ կյանք ապրելու վերաբերյալ:

22. Պատիժ (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 46-47-րդ էջեր:

Պատիժը, ինչպես որ մենք ենք այն սահմանում այստեղ, իր մեջ կրում է որոշ ցավոտ փորձությունների գաղափար, որոնք գալիս են մարդկանց կյանքում, որպեսզի պատժեն նրանց իրենց անհնազանդ արարքների համար: Պատիժն իր մեջ կրում է այն գաղափարը, որ անհնազանդ մարդը պետք է նեղություններ կրի իր արարքների համար: Պատիժը միշտ չէ, որ հետապնդում է ուղղելու նպատակ: Այն առավելապես կենտրոնանում է մարդու կատարած սխալի համար նրան փոխհատուցելու վրա:

23. Վրեժխնդրություն (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 47-48-րդ էջեր:

4

Վրեժխնդրությունը կենտրոնանում է սխալ արած մարդուն իր հասանելիքը հատուցելու վրա: Եթե Գևորգը ծեծել է քո փոքրիկ եղբորը, ապա դու էլ պետք է ծեծես նրան, կամ քո ընկերներին ասես, որ ծեծեն նրան: Վրեժխնդրությունը սխալ արած մարդուն պատժելու պատասխանատվությունը քո ձեռքերի մեջ վերցնելն է:

Վրեժխնդրությունն անտեսում է իշխանությունների հետ ճիշտ փոխհարաբերությունը և առաջնորդների պատասխանատվությունը՝ տեսնելու, թե արդյո՞ք անհնազանդություն թույլ տված անձնավորությունը ստացել է իր համապատասխան դաստիարակությունը: **Հռոմեացիներին 12:17-21-ը** մեզ ասում է, թե ինչ պետք է անի քրիստոնյան վրեժխնդրության առումով: **Աստված ասում է. «Իմն է վրեժխնդրությունը»:**

24. Անցկացրո՛ւ Բ-4. կետը. «Դաստիարակության և պատժի կարիքն այսօր» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 49-50-րդ էջեր:

Դու կարող ես որոշ ժամանակ հատկացնել՝ պատժելու և պատժի տարբեր տեսակները քննարկելու համար: **Եբրայեցիներին 12:5-13-ն** ասում է, թե ինչպես և ինչու է Աստված պատժում մեզ, երբ մենք չենք հնազանդվում: Այս հատվածը նաև քննարկում է այն հարցը, թե ինչու են մեր երկրավոր առաջնորդները դաստիարակում մեզ: Եթե քո առաջնորդները քեզ չսիրեն, չեն դաստիարակի քեզ:

Դու կարող ես քննարկել դաստիարակության որոշ տեսակներ, որոնք կիրառվում են քո ուսանողների հանդեպ: Փորձե՛ք գտնել պատճառները, թե ինչու են դաստիարակության այս տեսակներն օգտագործվում: Կարող ես նաև գնահատել այս մեթոդների արդյունավետությունը:

25. Անձնական կիրառություն (5 րոպե):

Եթե այս դասն ամբողջությամբ անցնում ես մեկ դասաժամով, դու կարող ես օգտագործել միայն առաջին անձնական կիրառման խորհուրդները: Եթե այս երկու թեմաներն ուսուցանում ես առանձին դասաժամերով, ապա կարող ես դրանցից ամեն մեկն օգտագործել համապատասխան դասաժամի համար:

Ա. Դասի 1-ին մասը. «Երբ քեզ ասել են, որ անես մի բան, որը մեղք է»:

Այս դասի անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ հիմնական պատճառը պարզելու վրա, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել՝ անես մի բան, որը սխալ է: Սա առանցքային նշանակություն ունի՝ իրավիճակին Աստծուն փառք բերող ձևով արձագանքելու հարցում: Քաջալերի՛ր նրանց, որ զարգացնեն այս ունակությունն ամեն անգամ, երբ առաջնորդը նրանց հանձնարարություն է տալիս, այլ ոչ թե միայն այն դեպքում, երբ այդ հանձնարարությունը կապված է մեղքի հետ:

4

Բ. Դասի 2-րդ մասը. «Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները»:

Քաջալերի՛ր նրանց, որ միշտ հնազանդվեն իրենց առաջնորդներին: Քաջալերի՛ր նրանց, որ տեսնեն իրենց առաջնորդներին հնազանդվելու հետևանքները և այն օրհնությունը, որ Աստված կտա իրենց առաջնորդներին հնազանդվողներին: Օգտագործի՛ր դասի սկզբում կազմած երկու սյունակները՝ նրանց այդ երկու սյունակների միջև եղած տարբերությունը տպավորիչ ձևով ցույց տալու համար:

Թող նրանք Աստծուն ուղղված մի աղոթք գրեն և շնորհակալություն հայտնեն իրենց վրա կարգված առաջնորդների համար: Քաջալերի՛ր ուսանողներին, որպեսզի Աստծո օրհնությունը խնդրեն իրենց առաջնորդների և նրանց աշխատանքի համար: Քաջալերի՛ր նրանց՝ Աստծո օգնությունը փնտրելու համար, որպեսզի կարողանան իրենց առաջնորդներին հնազանդվել այսօր և ամեն օր:

26. Հանձնարարություններ:

Այս դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույցի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ նախագծերի համար: Խնդրում եմ՝ հաշվի առնես, որ կա «Պատասխաններ» բաժինը Նախագիծ 5-րդի համար: Այն գտնվում է այս Ուսուցչի ձեռնարկում ներառնված՝ Ուսուցման ուղեցույցից անմիջապես հետո:

27. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

4

Դաս 5.
Ստուգարք

1. Նախաբան:

Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:

Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:

Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն եք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

5

2. Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:

Այս ստուգարքը վեց էջանոց է: 1-4-րդ էջերը դասաժամի վերջում պետք է վերադարձվեն ուսուցչին: Ուսանողներին բացատրի՛ր, թե ինչ պետք է կատարեն նրանք ստուգարքի 5-րդ և 6-րդ էջերում: Ցուցումները գրված են 5-րդ էջի վերևում: Նախքան ստուգարքը սկսելն ասա՛ ամսաթիվը, թե երբ պետք է նրանք վերադարձնեն ստուգարքի 5-րդ և 6-րդ էջերը: 5-րդ էջում տեղ կա, որտեղ նրանք կարող են գրել այդ ամսաթիվը:

3. Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Հնազանդություն մարդուն դասընթացի Ուսուցման ուղեցույցն ունի «Պատասխաններ» բաժինը մի քանի նախագծերի համար:

Ուսուցման ուղեցույցի «Պատասխանները» ներառնված են հաջորդ էջից սկսած:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Հնազանդություն Մարդուն

Ենթարկվող վերաբերմունք մշակել
իշխանություն ունեցողների հանդեպ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցման ուղեցույց
Պատասխաններ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ
Քրիստոնյաների Համար

Հնազանդություն Մարդուն
Նախագիծ 1.
Պատասխաններ

Նայել առաջնորդներին

1-4. Անձնական պատասխաններ

Հետևյալ բոլոր պատասխանները հիմնված են Հռոմեացիներին 13:1-7 և Ա Պետրոս 2:13-17 հատվածների վրա: Սրանք «առաջարկվող պատասխաններ» են: Քո ուսանողները կարող են ունենալ այլ ընդունելի պատասխաններ:

5. Որտեղի՞ց են ղեկավարները ստանում իրենց իշխանությունը:
(որտեղի՞ց են ղեկավարները ստանում իրավունք՝ առաջնորդելու կամ ղեկավարելու):
Հռոմեացիներին 13:2. «Աստծուց»:

6. Ի՞նչ է մարդն իրականում անում, երբ չի հնազանդվում իր առաջնորդին:
Հռոմեացիներին 13:2. «Հակառակում է Աստծո հրամանին»:

7. Որո՞նք են անհնազանդության հետևանքները (2 պատասխան է պահանջվում):

(1) Հռոմեացիներին 13:2. «Իրենց վրա դատապարտություն պիտի ընդունեն»: (Նույն պատասխանը տրված է Ա Պետրոս 2:14-ում):

(2) Հռոմեացիներին 13:4 վախ

(3) Հռոմեացիներին 13:2 «հակառակություն Աստծո կողմից կարգված իշխանություններին»:

8. Որո՞նք են հնազանդության հետևանքները (6 պատասխան է պահանջվում):

(1) Հռոմեացիներին 13:3.	«Չվախենալ իշխանություններից» (վախից ազատ):
(2) Հռոմեացիներին 13:3 և Ա Պետրոս 2:14.	«Գովեստ կստանաս»:
(3) Հռոմեացիներին 13:5.	«Պահում է քեզ Աստծո պատժից»:
(4) Հռոմեացիներին 13:5.	«Դու մաքուր խղճմտանք ես ունենում»:
(5) Ա Պետրոս 2:13.	«Դու Աստծուն հաճելի կլինես»:
(6) Ա Պետրոս 2:14.	«Դու անում ես Աստծո ուզածը»:
(7) Ա Պետրոս 2:15.	«Կպապանձեցնեք հիմար մարդկանց խոսակցությունը ձեր մասին»:
(8) Ա Պետրոս 2:16.	«Հնարավոր է՝ դու գայթակղություն ունենաս՝ գործածել քո ազատությունը որպես չարության ծածկոց»: (Կամ չկարողանալ փոխհատուցում անել անցյալի մեղքերի համար):

9. Անձնական պատասխաններ

Հնազանդություն մարդուն
Նախագիծ 3.
Պատասխաններ

Դանիելը և նրա ուտելիքը

Բոլոր պատասխանները հիմնված են Դանիել 1-ին գլխում բերված պատմության վրա: Սրանք «առաջարկվող պատասխաններ» են: Քո ուսանողները, հնարավոր է, ունենան ընդունելի այլ պատասխաններ:

1. Ինչո՞ւ Դանիելը չհնազանդվեց առաջին հանձնարարությանը:

h. 8. «Բայց Դանիելը որոշեց իր սրտում, որ ինքն իրեն չի պղծելու թագավորի կերակրով ու նրա ըմպած գինով, ու խնդրեց ներքնապետին թույլ տալ, որ իրենց չպղծի»:

2. Ո՞րն էր հիմնական պատճառը, երբ Դանիելին ասացին, որ ուտի և խմի թագավորի ուտելիքից ու գինուց:

h. 3.,4.,5. Դանիելը և նրա երեք ընկերները պետք է երեք տարի վարժվեին, որից հետո պետք է մտնեին պալատական ծառայության մեջ: Միայն ուժեղ, առողջ և բարետես երիտասարդներն էին ընտրվել Հուդայի թագավորական ընտանիքից: Թագավորը նրանց համար նշանակել էր իր խոհանոցի լավագույն սնունդն ու գինին: Թագավորն ուզում էր, որ նրանք ուտեին լավագույն ուտելիքը:

h. 10. Դանիելի խնամակալը նրան ասաց, որ նա ուտի առաջարկված ուտելիքը, քանի որ այդ հրամանը ստացել էր թագավորից: Խնամակալը թագավորին հնազանդվելու պատասխանատվություն ուներ:

h.15. Որպեսզի նրանք առողջ լինեին:

3. Դանիելի ղեկավարները նրան ասացին, որ ուտի իրեն հրամայված՝ թագավորի ուտելիքից: Ի՞նչ արեց Դանիելը՝ նախքան իր ղեկավարներին հնազանդվելը: Թվարկի՛ր նրա կատարած գործողությունները (նվազագույնը յոթ հնարավոր պատասխաններ): Քո պատասխանները վերցրո՛ւ 5-15 համարներից:

(1) h. 8. Նա համոզվելու համար ստուգեց, թե արդյոք չի՞ խախտի Աստծո օրենքները, եթե ուտի այդ սնունդը:

(2) h. 8. Դանիելն իր մտքում որոշեց չուտել թագավորի խոհանոցի սնունդն ու գինին:

(3) հ. 8. Նա իր խնամակալից թույլտվություն խնդրեց՝ դրա փոխարել ուրիշ ուտելիք ուտել:

(4) հ. 11. Դանիելն այդ մասին խոսեց այն սպասավորի հետ, որին իրեն խնամակալ էին նշանակել:

(5) հ. 12. Դանիելը բանջարեղենի և ջրի սննդակարգի տասնօրյա փորձաշրջան առաջարկեց:

(6) հ. 13. Դանիելը խնդրեց սպասավորին՝ գնահատել և որոշել, թե արդյո՞ք նրանք իրականացրել էին այն հիմնական նպատակը, որի համար թագավորը նրանց ասել էր, որ ուտեին իր ուտելիքից, որպեսզի նրանք առողջ լինեն:

(7) հ. 14. Դանիելը համբերությամբ սպասեց պատասխանի:

(8) հ. 15. Դանիելը համագործակցեց սպասավորի հետ տասնօրյա փորձության հարցում:

4. Ինչպիսի՞ վերաբերմունք ուներ Դանիելն իշխանությունների հանդեպ:

(1) հ. 8. Նա հարգանք ցուցաբերեց իր ղեկավարների հանդեպ և պատրաստ էր նրանց հետ քննարկել այդ հարցը: Դանիելը շատ լավ վերաբերմունք ուներ իր ղեկավարների հանդեպ: 8-րդ համարը ցույց է տալիս նրա վերաբերմունքն Աստծո օրենքներին հնազանդվելու հարցում: Նրա միտքը հստակ էր. նա չէր խախտելու Աստծո օրենքները: Դանիելի վերաբերմունքն իր ղեկավարների հանդեպ շատ հարգալից էր: Դանիելը չէր համառում իր ձևով. նա ըմբոստ վերաբերմունք չուներ: Նա քննադատական վերաբերմունք չուներ. ոչ մի անգամ չի ասվում, որ Դանիելը քննադատեց իր ղեկավարներին:

(2) հ. 11. Նա այդ մասին խոսեց իր ղեկավարների հետ:

(3) հ. 12. Նա մի նոր առաջարկություն արեց: Նա չէր ստիպում իր սեփական տարբերակը:

(4) հ. 13. Նա իր ղեկավարներին թողեց վերջնական որոշում կայացնելը:

5. Ինչո՞ւ Դանիելը հնազանդվեց:

(1) Դանիելը հնազանդվեց, քանի որ Աստված ուզում էր, որ նա հնազանդվի: Աստծո օրենքներն էին նրան ասում, որ հնազանդվեր մարդուն:

(2) հ. 14. Որովհետև նա թույլտվություն ստացավ՝ հատուկ սննդակարգ ունենալու: Այս հատուկ սննդակարգը նրան հնարավորություն տվեց հնազանդվել թե՛ մարդուն, թե՛ Աստծուն:

Հնազանդություն մարդուն
Նախագիծ 5.
Պատասխաններ

Դանիելի երեք ընկերները և հնոցը

Բոլոր պատասխանները հիմնված են Դանիել 3-րդ գլխում բերված պատմության վրա: Սրանք «առաջարկվող պատասխաններ» են: Քո ուսանողները կարող են ունենալ ընդունելի այլ պատասխաններ:

1. Ո՞րն էր հիմնական պատճառը, որ երեք երիտասարդներին ասացին, որ խոնարհվեն ոսկե արձանի առաջ:

հ. 5. Նրանք պետք է երկրպագեին Նաբուգոդոնոսորի արձանին՝ ցույց տալու համար իրենց նվիրվածությունը թագավորին:

հ. 28. Թագավորը բացատրում է, որ նրանք պետք է ծառայեն և երկրպագեն մեկ այլ աստծո:

2. Ինչո՞ւ այդ երեք մարդիկ անհնազանդ եղան:

Հ. 18. Նրանց ասել էին, որ մեկ այլ աստծո երկրպագեն: Սա միանգամայն դեմ էր Աստծո օրենքներին: Չկար մի բան, որ նրանք կարող էին անել, որպեսզի փոխեին իրավիճակը և հնազանդվեին առանց մեղք գործելու: Նրանց միակ տարբերակն էր՝ հնազանդվել Աստծո օրենքներին և կրել դրա հետևանքները:

3. Որո՞նք էին նրանց անհնազանդության հետևանքները:

(1) հ. 8. Նրանք մեղադրվեցին պետական պաշտոնյաների կողմից:

(2) հ. 9-18. Նրանք թագավորին անձամբ բացատրելու հնարավորություն ունեցան՝ թե ինչու չէին երկրպագելու արձանին: Նրանք բացատրեցին, որ արձանին չերկրպագելու պատճառը գալիս էր իրենց սեփական կրոնական համոզմունքից, ոչ թե՝ որ նրանք փորձում էին ըմբոստանալ թագավորի օրենքների դեմ:

(3) հ. 15. Նրանց երկրորդ հնարավորություն տրվեց թագավորի հրամանին ենթարկվելու:

(4) հ. 19. Նրանց այս քայլը բարկացրեց թագավորին:

(5) հ. 19. Հնոցը սովորականից յոթ անգամ ավել տաքացրին:

(6) հ. 21. Նրանք պատժվեցին իրենց անհնազանդության պատճառով: Նրանք զցվեցին հնոցի մեջ:

(7) հ. 22. Այն մարդիկ, որոնք նրանց զցեցին հնոցի մեջ, մահացան: (Եթե այդ երեք երիտասարդները հնազանդվեին թագավորին, այս ողջ պատմությունը տեղի չէր ունենա):

(8) հ. 24. Թագավորը զարմացավ՝ տեսնելով երեք երիտասարդներին կրակի մեջ զցելու արդյունքները: Այն, ինչ նա տեսավ, իրոք ազդեց իր վրա: Այն իրականում գրավեց նրա ուշադրությունը և ստիպեց նրան մտածել:

(9) հ. 25. Աստված օգտագործեց նրանց, որպեսզի նրանք և նրանց թագավորը մի մեծ դաս ստանան Իր զավակներին պաշտպանելու առումով Իր զորության մասին:

(10) հ. 25. Աստված Ինքը պաշտպանեց և փրկեց նրանց:

(11) հ. 26. Նրանք թագավորին ցույց տալու առիթ ունեցան, որ պատրաստ էին հնազանդվել նրան, քանի դեռ նա չէր ստիպում իրենց՝ խախտել Աստծո օրենքները:

(12) հ. 27. Նրանց կյանքը վկայություն դարձավ այնտեղ գտնվող բոլոր մարդկանց համար:

(13) հ. 29. Նրանք ստացան թագավորի պաշտպանությունն ընդդեմ հետագա կրոնական հետապնդումների:

(14) հ. 30. Նրանք թույլտվություն ստացան՝ մնալ Բաբելոնի պալատական գործերի մեջ:

(15) հ. 30. Նրանք թագավորի կողմից մեծ առաջխաղացում ստացան:

4. Ինչպիսի՞ն էր նրանց վերաբերմունքը թագավորի հանդեպ:

(1) հ. 16.-18. Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը թագավորի հանդեպ հարգանքի ու հավատարմության վերաբերմունք ունեին: Նրանք ըմբոստ չէին, որ իրենց տեսակետը պարտադրեին թագավորին. նրանք պարզ ու հասարակ ձևով բացատրեցին նրան, թե ինչու չէին երկրպագում կուռքին:

(2) Նրանք համարձակ էին, ոչ թե վախեցած:

Ստուգարք

Պատասխաններ

Դասընթացի վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն______________________________ **Հնազանդություն Մարդուն**

Ամսաթիվ___________________________ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան__________________________ **__________դասարան**

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 1 միավոր)

Ցուցումներ. Դի՛ր ____X_____, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր ____O_____ , եթե պատասխանը սխալ է:

1.______Եթե քեզ հանձնարարել են, որ ինչ-որ սխալ բան անես, ապա Աստված ուզում է, որ դու հասկանաս, թե այդ դեպքում ուրիշ էլ ի՛նչ կերպ կարող ես դա անել, որպեսզի մեղք չգործես:

2.______Աստվածաշնչի երկու մեծագույն օրենքները խոսում են սիրո մասին:

3.______Եթե քո ղեկավարը քեզ ասում է, որ մեղք գործես, դու պետք է դա անես, եթե անգամ դա իրոք մեղք է:

4.______Աստված ուզում է, որ դու հնազանդվես միայն այն ղեկավարներին, ովքեր անթերի են:

5.______Դու միշտ պետք է փորձես հասկանալ հիմնական պատճառը, թե ինչու է քո ղեկավարը քեզ ասում, որ դա անես:

6.______Աստված պատժում է քեզ, քանի որ ատում է քեզ, երբ դու մեղք ես գործում:

7.______Քո պարտականությունն է՝ դատել քո ղեկավարներին, և դու պետք է հնազանդվես միայն այն ղեկավարներին, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ են:

8.______Աստվածաշունչը մեզ ասում է, որ երեխաները չպետք է հնազանդվեն իրենց ծնողներին:

9.______Դու պետք է միշտ քո ղեկավարներին հնազանդվելու համար պատրաստակամ լինես:

10.______Երբ քո ղեկավարը սխալ բան է անում, դու միշտ պետք է նրան ասես, որ նա սխալ է:

11.______Աստվածաշունչը քեզ ասում է, որ դու պարտավոր չես հնազանդվել քո ծնողներին, երբ արդեն 18 տարեկան ես:

12.______Աստված մեզ պատվիրել է՝ սիրել մեր ղեկավարներին:

13.______Եթե սիրես Աստծուն, դու կհնազանդվես միայն ճշմարիտ քրիստոնյաներին: Դու չես հնազանդվի նրանց, ովքեր մեղավոր են:

14.______Դու պետք է սովորես հնազանդվել քո կամքով, առանց սպասելու, որ քեզ ասեն:

Բազմակի ընտրությամբ հարցեր (3 միավոր):

Ցուցումներ. Ընտրի՛ր լավագույն պատասխանը և դի՛ր պատասխանի տառը հարցի դիմացի գծիկի վրա:

1.________ Եթե քո ղեկավարը սխալ է անում, դու պետք է.

Ա. Բողոքես և վիճես նրա հետ:

Բ. Աղոթես նրա համար:

Գ. Չհնազանդվես նրան:

Դ. Ասես նրա ղեկավարին, թե ինչ սխալ է նա արել:

Կարճ շարադրանքով հարցեր:

1. Որո՞նք են մարդուն հնազանդվելու երեք մակարդակները (9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր):

1.______________________________

2.______________________________

3.______________________________

2. Թվարկի՛ր քո առաջնորդին հնազանդվելու 5 արդյունքներ (5 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր):

1.______________________________

2.______________________________

3.______________________________

4.______________________________

5.______________________________

3. Ներքևում գրե՛ք անգիր համարներ (16 միավոր):

Կարճ շարադրանքով հարցեր (շարունակություն):

4. Պատմի՛ր թեկուզ մեկ գործողության ձև, թե ինչպես ես դու այս շաբաթ արդեն գործնականում կիրառել այն, ինչ սովորել ես սույն դասընթացին: Եղի՛ր կոնկրետ (10 միավոր):

5. ***Ինչո՞ւ*** պետք է պարզես հիմնական պատճառը, թե ինչու է քո ղեկավարը քեզ ասել, որ տվյալ բանն անես: (Երբ նա քեզ ասել է, որ ճիշտ բան անես): (չորս միավոր):

6. Ո՞րը պետք է լինի քո ղեկավարին հնազանդվելու հիմնական դրդապատճառը: (չորս միավոր):

7. Թվարկի՛ր երեք գործողության ձև, որով քո ղեկավարին կարող ես ցույց տալ, որ ***ուզում*** ես նրան հնազանդվել (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

1.

2.

3.

Կարճ շարադրանքով հարցեր (շարունակություն):

8. Ո՞րն է առաջին գործողությունը, որը դու պետք է անես, երբ քո ղեկավարը քեզ հանձնարարում է սխալ բան անել (5 միավոր):

______

______

______

9. Հատուկ կիրառության նախագիծ:

Ա. Վերջին մեկ կամ երկու ամիսների ընթացքում ո՞ր առաջնորդին է քեզ համար ամենադժվարը եղել հնազանդվել: Համառոտ բացատրի՛ր, թե ինչու (2 միավոր):

______

______

______

Բ. Հիշի՛ր մի քանի տարբեր դեպքեր, որոնք մենք քննարկել ենք «Հնազանդություն մարդուն» դասընթացին: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էիր այսօր անել, որպեսզի քեզ համար ավելի հեշտ լիներ քո ղեկավարին հնազանդվելը: Թվարկի՛ր երեք օրինակ (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

1. ______

______

______

2. ______

______

______

3. ______

______

______

Խնդրում եմ, նկատե՛ք.
Այս ստուգարքի 5-րդ էջը համընթաց է վերոնշյալ՝ Հատուկ կիրառության նախագծին: Դու պետք է արտագրես այս էջի քո պատասխանները՝ նախքան սույն ստուգարքը քո ուսուցչին հանձնելը: Ուսուցիչը նաև պետք է քեզ ասի ամսաթիվը, թե երբ պետք է դու այս ստուգարքի 5-րդ էջը վերադարձնես իրեն:

Անուն________________________________

Ամսաթիվ________________________________

Դասարան________________________________

Հնազանդություն Մարդուն

Ստուգարք, 5-րդ խմբագրում, էջ 5-րդ

Ցուցումներ.

Ներքևում, 10-րդ հարցին պատասխանելիս, **արտագրի՛ր քո պատասխանները 4-րդ էջից՝** այս ստուգարքի 9-րդ համարից: Խնդրեմ, կարդա՛ ներքևում 11-րդ և 12-րդ հարցերը՝ համոզվելու համար, որ հասկացել ես, թե ինչ պետք է անես ստուգարքի այս մասը լրացնելիս: Հետո վերցրո՛ւ այս էջը քեզ հետ: Ստուգարքի մնացած մասը պետք է հանձնես ուսուցչին հենց հիմա:

10. Ա. Անցած մեկ կամ երկու ամսվա ընթացքում ո՞ր առաջնորդին է քեզ համար ամենադժվարը եղել հնազանդվել: Համառոտ բացատրի՛ր՝ ինչո՛ւ (երկու միավոր):

____

____

____

Բ. Հիշի՛ր մի քանի տարբեր օրինակներ, որոնք մենք քննարկել ենք «Հնազանդություն մարդուն» դասընթացին: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էիր այսօր անել, որպեսզի քեզ համար ավելի հեշտ լիներ քո ղեկավարին հնազանդվելը: Թվարկի՛ր 3 օրինակ (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

1. ________________________________

____

____

2. ________________________________

____

____

3. ________________________________

____

____

11. Ընտրի՛ր 10. Բ.-ում թվարկվածներից մեկը, որը պետք է կատարես այս շաբաթ-կիրակի:

Քո ընտրությունը: ________________________________

12. Նախորդ հարցի (11.) մեջ գրված քո նպատակը լրացնելուց հետո գրի՛ր, թե ինչ տեղի ունեցավ:

Ա. Ե՞րբ դու դա արեցիր (2 միավոր): Ամսաթիվը________ Ժամը___________

Բ. Որտե՞ղ դու դա արեցիր (2 միավոր): Վայրը___________________________

Գ. Համառոտ նկարագրի՛ր արդյունքները (3 միավոր):

____

____

____

____

____

Դ. Դա կատարելուց հետո ավելի հե՞շտ եղավ հնազանդվելը քո առաջնորդին: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ (3 միավոր):

____

____

____

____

____

Ե. Ի՞նչ սովորեցիր այս փորձից (6 միավոր):

1. ____

____

____

2. ____

____

____

3. ____

____

____

Հնազանդություն Մարդուն
Ստուգարք 5
Պատասխաններ

Նշում ուսուցչին. Դու կարող ես սպասել մինչև ուսանողները կլրացնեն ստուգարքի 5-րդ և 6-րդ էջերը՝ նախքան նրանց ստուգարքը գնահատելը:

Էջ 1.
Ճիշտ-սխալ հարցեր
(յուրաքանչյուրը 1 միավոր):

1. X ճիշտ
2. X ճիշտ
3. 0 սխալ
4. 0 սխալ
5. X ճիշտ
6. 0 սխալ
7. 0 սխալ
8. 0 սխալ
9. X ճիշտ
10. 0 սխալ
11. 0 սխալ
12. X ճիշտ
13. 0 սխալ
14. X ճիշտ

Էջ 2.
Բազմակի ընտրությամբ հարցեր
(3 միավոր):

1. Բ

Համառոտ պատասխանով հարցեր:
(Առաջարկվող պատասխանները պարտադիր չէ, որ ճշգրիտ բառերով լինեն, որպեսզի ճիշտ համարվեն):

1. 9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր:
   1. Հնազանդվի՛ր (քանի որ քեզ ասել են, որ դա անես):
   2. Հնազանդվի՛ր և պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես:
   3. Հնազանդվի՛ր քո կամքով (քանի որ այդպես անելը ճիշտ է):
2. 5 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր (անձնական պատասխան):
3. 16 միավոր:

   Հռոմեացիներին 13:1-2
   Եփեսացիներին 6:1 և

Հնազանդություն Մարդուն

Ստուգարք 5

Պատասխաններ, Էջ 2.

Էջ 3.

Համառոտ պատասխանով հարցեր:
(Առաջարկվող պատասխանները պարտադիր չէ, որ ճշգրիտ բառերով լինեն, որպեսզի ճիշտ համարվեն):

4. 10 միավոր (անձնական պատասխան):

5. 4 միավոր (առաջարկվող պատասխան):

   Որպեսզի հաջորդ անգամ ես կարողանամ իմ կամքով հնազանդվել:

6. 4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր (առաջարկվող պատասխաններ):

   Ցույց տամ Աստծուն, որ սիրում եմ Իրեն:

7. 6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր (անձնական պատասխաններ):

Էջ 4.

8. 5 միավոր (առաջարկվող պատասխան):

   Պարզեմ հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է առաջնորդն ինձ ասել, որ դա անեմ:

9. Ա. 2 միավոր (անձնական պատասխան):

   Բ. 6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր (անձնական պատասխաններ):

Էջ 5. և 6.

10. Ոչ մի միավոր:
11. Ոչ մի միավոր:
12. Բոլորը (անձնական պատասխաններ):

    Ա. 2 միավոր:

    Բ. 2 միավոր:

    Գ. 3 միավոր:

    Դ. 3 միավոր:

    Ե. 6 միավոր:

Շնորհավորում ենք

____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հնազանդություն Մարդուն

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ __________________________________

Ամիս, ամսաթիվ ____________________________

Շնորհավորում ենք

____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հնազանդություն Մարդուն

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ __________________________________

Ամիս, ամսաթիվ ____________________________